



# Ժողովրդական հաշվետվություն

ՀՀ Ժողովրդագրական  
քաղաքականության  
ռազմավարության և ՀՀ 2012թ.  
պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի  
համապատասխանության  
վերաբերյալ



Սույն հաշվետվությունը չի հետապնդում ՀՀ Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության, դրա նպատակների և դրանից բխող քաղաքականության միջոցառումների ուսումնասիրության և վերլուծության նպատակ: Սույն հաշվետվությունը նպատակաուղղված է ուսումնասիրել ՀՀ 2012թ. պետական բյուջետային փաստաթղթերով ներկայացված ծրագրերի, դրանցով հոջակված նպատակների և նախանշված ֆինանսական ու ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշների համապատասխանությունը Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության փաստաթղթով ամրագրված դրույթների հետ:



Մարդկային զարգացման  
միջազգային կենտրոն  
International Center for  
Human Development

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և ՀՀ 2012թ. Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի համապատասխանության վերաբերյալ

Սույն հաշվետվության մեջ տեղ գտած մտքերն ու արտահայտված կարծիքները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի կարծիքներին և տեսակետներին:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և ՀՀ 2012թ. Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի համապատասխանության վերաբերյալ

Սույն հաշվետվության մեջ տեղ գտած մտքերն ու արտահայտված կարծիքները հեղինակներինն են և չեն կարող մեկնաբանվել իբրև Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի կարծիք:

## ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն.....	5
Կառավարության բյուջետային պլանավորման շրջանակը.....	6
Համապատասխանության վերլուծություն.....	7
Խնդիր 1. Ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործումը	8
Խնդիր 2. Ծնունդների սոցիալական խթանումը՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով.....	9
Խնդիր 3. Երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի աստիճանական բարելավումը	15
Խնդիր 4. վաղաժամ մահացությունների թվաքանակի նվազեցումը եվ Խնդիր 5. բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության վիճակի բարելավումը.....	16
Խնդիր 6. բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմումը.....	20
Համեմատություն նախորդ հաշվետվության հետ.....	21
Բացահայտված խնդիրներ ու Առաջարկություններ.....	22
Հավելվածներ.....	27
Հավելված Ա. ՀՀ Ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012թ. պետական ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկ և 2012թ. պետական բյուջեի համապատասխանության ներկայացում.....	28
Հավելված Բ. Բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր).....	35
Հավելված Գ. Ներկա պահին կիրառվող Ժողովրդագրության բյուջետային ծրագիրը (ծրագրային դասակարգում).....	35

## ԱՌՅՈՒՄԱԿՆԵՐ

Աղյուսակ 1. Ծննդյան միանվագ նպաստի բյուջետային ցուցանիշները 2006-2012թթ. ....	9
Աղյուսակ 2. Երեխաների կենդանի ծնունդների վիճակագրություն 2006-2010թթ. ....	10
Աղյուսակ 3. 3-րդ և ավելի երեխաների հարաբերական աճը 2007-2010թթ. ....	10
Աղյուսակ 4. Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի հատկացման վիճակագրություն 2007-2012թթ. ....	11
Աղյուսակ 5. Զբաղվածության ծրագրերի ֆինանսավորումը 2010-2012թթ. ....	13
Աղյուսակ 6. Նախադպրոցական խնամքի ֆինանսավորումը 2011-2012թթ. ....	14
Աղյուսակ 7. 2010-2012թթ. պետական բյուջեներով սահմանված հատկացումները երիտասարդական ծրագրերին.....	15
Աղյուսակ 8. «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի ֆինանսավորման դինամիկան.....	16
Աղյուսակ 9. Առողջապահության բնագավառի ծախսերը և դինամիկան 2010-2012թթ. ....	16
Աղյուսակ 10. Առողջապահության բնագավառի ծախսերը միջին ժամկետ հատվածում.....	18
Աղյուսակ 11. Մանկի անվտանգությանը ուղղակիորեն նպաստող միջոցառումների բյուջեն 2010-2012թթ.....	19
Աղյուսակ 12. Մարզպետարանների բյուջեները 2010-2012թթ.....	20



## Ներածություն

2009թ. հուլիսի 2-ին ՀՀ կառավարության կողմից հավանություն տրվեց ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությանը (այսուհետ՝ ԺՔՌ), որի հիման վրա նույն 2009թ. դեկտեմբերի 24-ին հավանություն տրվեց նաև 2010թ. պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին, ինչպես նաև 2011թ. փետրվարի 17-ին հավանություն տրվեց «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2011 թվականի պետական ծրագրին», իսկ այնուհետև նաև «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագրին» (այսուհետ՝ պետական ծրագիր) 2011թ. հոկտեմբերի 27-ին:

2010թ. ծրագրի և 2011թ. պետական բյուջեի փոխկապակցվածության վերաբերյալ վերլուծությունը արդեն իսկ իրականացվել էր Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄՀՄԿ) կողմից: Սույն հաշվետվությունը նախորդող հաշվետվության շարունակությունն է ուշադրությունը կսևեռի ինչպես 2012թ. պետական ծրագրի և 2012թ. պետական բյուջեի փոխկապակցվածության աստիճանի վերլուծությանը, ինչպես նաև նախորդ հաշվետվության ժամանակահատվածի համեմատ փոփոխությունների ներկայացմանը: Որոշ դիտարկումներ ու առաջարկություններ, որոնք ներկայացվել էին նախորդ հաշվետվությունում և կարող են դեռ որոշակի օգտակարություն պարունակել տեղ չեն գտել այս հաշվետվությունում: Այդ իսկ պատճառով, սույն հաշվետվությունը նախընտրելի է դիտարկել որպես նախորդ հաշվետվության տրամաբանական շարունակություն, այլ ոչ ամբողջական փոխարինում:

Այս տեսանկյունից, սույն փաստաթուղթը առավել կարևորվում է նաև դինամիկ դիտարկման տեսանկյունից: Առաջին տարեկան ծրագրից հետո մշակված ևս երկու ծրագրերը ենթարկվել են որոշակի ճշգրտումների (որոշ դեպքերում նաև կրճատումների), ուստի այդ փոփոխությունների և պետական բյուջեում դրանց արտացոլման աստիճանը հնարավոր է դիտարկել նաև ժամանակի գործոնը հաշվի առնելով:

Ընդ որում, սույն փաստաթղթում «պետական բյուջե» արտահայտությունը կիրառվում է ոչ միայն տարեկան բյուջեի մասին օրենքի, այլ նաև դրան լրացնող փաստաթղթերի տեսանկյունից: Նշված «լրացված» փաստաթղթի շրջանակը ընգրկում է Միջին ժամկետ (եռամյա) ծախսերի ծրագիրը, բյուջեի ուղերձը և բացատրագիրը (որոնք թեև ներկայացվում են Ազգային ժողով, սակայն չեն հանդիսանում օրենքի մաս): Ընդ որում, հարկ է նշել, որ նշված բյուջետային փաստաթղթերի շրջանակը պարունակում է նաև ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում մշակված նյութերը, որոնք նույնպես ներկայացվում են ԱԺ՝ տարեկան բյուջեի մասին օրենքի նախագծի հետ միասին:

## Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն

Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը մանրամասնորեն ներկայացնում է Հայաստանում ժողովրդագրական զարգացման իրավիճակն ու միտումները, արձանագրում է դրանց ոչ բարենպաստ լինելը և խնդրի հրատապության աստիճանը: Ռազմավարությունում զետեղված են տեղեկատվություն բնակչության թվաքանակի և կառուցվածքի մասին, ինչպես նաև շարադրվում են միտումների վրա ազդող գործոնները և ներկայիս մարտահրավերները:

Ռազմավարության երկրորդ մասում ներկայացվում են ռազմավարական նպատակները, առաջնայնությունները ու միտումները: Ընդհանուր առմամբ, ռազմավարությունը վերլուծա-նկարագրողական բնույթ է կրում և ուղղորդում է ռազմավարական որոշումների, սակայն ռազմավարական նպատակների թեմայինացման աստիճանը չափազանց նվազ է: Թեև ռազմավարությունը (ինչպես նաև դրանից բխող տարեկան միջոցառումների ցանկը) համահունչ են Կայուն Ջարգաց-

ման Ծրագրի հետ, այնուամենայնիվ, ԺՔՌ-ից ուղղակիորեն չեն բխում ռազմավարական և ծրագրային միջնաժամկետ և հեռահար թվայնացված նպատակակետերը ու ցուցանիշները: Սա խիստ կարևոր դիտարկում է հենց մեր երկրի պայմաններում, քանզի պետական համակարգը հիմնականում գործում է խիստ իմպերատիվ ու հստակ որոշումների պարագայում: Միաժամանակ (և որպես նշվածի և՛ պատճառ և՛ հետևանք) ցածր է ճյուղային նախարարությունների ինքնուրույնության աստիճանը՝ ոլորտային քաղաքականության օպերատիվ ճշգրտումների և ապակենտրոնացված բյուջետային որոշումների կայացման հարցում: **Այս տեսանկյունից դիտարկելիս, ԺՔՌ ոչ բավարար աստիճանի հստակ ու թվայնացված լինելը ինքնին արդեն իսկ հանդիսանում է բյուջետային համակարգի հետ փոխկապակցվածության սահմանափակում:**

Ի տարբերություն նշվածի, բյուջետային համակարգը և որոշումների կայացման մեխանիզմները սովորաբար ավելի սերտ են փոխկապակցվում հստակ թվայնացված միջնաժամկետ և - հեռահար թիրախների հետ, օրինակ Կայուն Զարգացման Ծրագրի և Միջին Ժամկետ Ծախսերի Ծրագրի փոխկապակցվածության աստիճանը:

Փոխարենը, ԺՔՌ-ում մանրամասնորեն ներկայացված է մոնիտորինգի և վերլուծության համար անհրաժեշտ ցուցանիշների ցանկը (ոչ թե ցուցանիշների թվայնացված թիրախները):

Այնուամենայնիվ, ռազմավարությունը կյանքի կոչելու գործիք է հանդիսանում ԺՔՌ-ից բխող և դրա հիման վրա մշակված տարեկան ծրագրերը (ՏԾ) և դրանց ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը: Նշված փաստաթղթերի բովանդակային զարգացումները առավել մանրամասն ներկայացված են «Համեմատություն նախորդ հաշվետվության հետ» հատվածում: 2012թ. պետական բյուջեի հետ համապատասխանության աստիճանը գնահատվել է 2012թ. ՏԾ-ի միջոցառումների ցանկի համեմատությամբ:

2012թ. Տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը նույնպես պարունակում են ժողովրդագրական իրավիճակի, հիմնական խնդիրներ ու ակնկալվող արդյունքների մասեր: Բացի դրանից, միջոցառումները խմբավորված են ըստ գերակայությունների, որոնք ներկայացված են ստորև.

1. Ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործումը,
2. ծնունդների սոցիալական խթանումը՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով,
3. երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի աստիճանական բարելավումը,
4. վաղաժամ մահացությունների թվաքանակի նվազեցումը,
5. բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության վիճակի բարելավումը,
6. բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմումը:

## **Կառավարության բյուջետային պլանավորման շրջանակը**

«Ը բյուջետային համակարգի մասին օրենքով ամրագրվում է բյուջետային որոշումների կայացման համակարգի սկզբունքները, համաձայն որոնց գործընթացը բաժանված է երկու հիմնական փուլերի՝ ռազմավարական և մանրակրկիտ բյուջետավորման: Համաձայն նշվածի, հիմնական բյուջետային որոշումները յուրաքանչյուր բյուջետային ցիկլի ընթացքում կայացվում են ռազմավարական փուլի ընթացքում՝ եռամյա զարգացման համատեքստում:



Ընդհանուր առմամբ, ռազմավարական պլանավորման և ոլորտային քաղաքականության որոշման հարցերը մեր երկրում բավարար աստիճանի կարգավորված ու համակարգված չեն: - Հաճախակի են դեպքերը, երբ պետական մարմինները մշակում են առանձին ոլորտների նպատակների և միջոցառումների վերաբերյալ փաստաթղթեր, որոնք, այնուհետև, հավանության են արժանանում վերադաս մարմինների (օրինակ՝ ՀՀ կառավարության) կողմից: Սակայն, նման փաստաթղթերի ֆիսկալ հետևանքների գնահատականները կրում են ընդհանրական բնույթ և չեն կարող ավտոմատ կերպ ներառվեն բյուջետային համակարգում: Նշված ռիսկերը մեղմելու նպատակով Հայաստանում ներդրված է միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման համակարգը, որը միասնական կերպով է դիտարկում ոլորտային քաղաքականությունները և համապատասխան բյուջետային հատկացումները՝ միմյանց փոխկապակցված:

Այդ իսկ պատճառով էլ, խիստ կարևոր է ցանկացած ռազմավարական բնույթի որոշում ներկայացնել և ամրագրել միջնաժամկետ ծախսերի ծրագրով՝ դրանով իսկ հեշտացնելով բավարար աստիճանով բյուջետային հատկացումների վերաբերյալ որոշումների կայացումը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանը անցում է կատարում դեպի ծրագրային բյուջետավորում, բոլոր միջնաժամկետ ծախսերի հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ոչ միայն կարիքների նկարագրման, այլև հստակ ծրագրային տրամաբանության՝ համապատասխան արդյունքների նկարագրմամբ և ցուցանիշների ներկայացմամբ:

Նշվածը համակարգը, այնուամենայնիվ, չի գործում ամբողջովին այն կեչպ, ինչպես պլանավորված է: Խոսքը վերաբերվում է այն հանգամանքին, որ պետական բյուջեի փաստաթղթերի մշակման համար պատասխանատու լիազոր մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարություն) հաճախակիորեն ներկայացնում է ճյուղային մարմինների կողմից ներկայացված նոր նախաձեռնությունների հայտերի բովանդակությանը հակառակ կարծիք՝ հիմք ընդունելով այդ նոր նախաձեռնությունների վերաբերյալ կառավարության կողմից ընդունված որոշումներում հստակ գումարային և ժամկետային չափորոշիչների բացակայությունը: Միաժամանակ, տեղ են գտնում նաև դեպքեր, երբ նույն լիազոր մարմինը որոշ ոլորտային քաղաքականության նյութեր վերաբերյալ կարծիք է հայտնում, որ դրանցում անհրաժեշտ չի հստակեցնել ֆինանսական չափորոշիչները, քանի որ այդ տեսակի որոշումները հանդիսանում են ՄԺԾԾ շրջանակի որոշումներ: Այս պարագայում, ֆինանսների նախարարության վարքագիծը հակասական չէ և, կարելի է ասել, որ համապատասխանում է լիազոր մարմնի լիազորություններին: Սակայն, մինչև ժամանակ, հարկ է նշել, որ ՄԺԾԾ շրջանակներում գործում են համապատասխան քաղաքական որոշումներ կայացնելու համար նախատեսված մարմիններ, որոնք և վերցրել են իրենց վրա ոլորտային քաղաքականությունների ֆինանսավորման և գերակայությունների սահմանման գործառույթը: Այս տեսանկյունից, և հաշվի առնելով վերը նշված սահմանափակումները, ԺՔՌ (ինչպես նաև այլ ռազմավարությունների) առաջխաղացման գործում խիստ կարևորվում է ոչ միայն ռազմավարության ու տարեկան ծրագրերի ու միջոցառումների ցանկի մշակման գործընթացը, այլև ակտիվ միջամտությունը ՄԺԾԾ գործընթացում հիմնավորումների ու քննարկումների գործընթացներում:

## Համապատասխանության վերլուծություն

Բյուջետային փաստաթղթերի շրջանակը, որի հետ սույն նյութում իրականացվել է համապատասխանության վերլուծություն իրենից ներկայացնում է Հայաստանում կիրառվող բյուջետային համակարգի բոլոր հիմնական նյութերը, որոնք արտացոլում են ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքով սահմանված ինչպես ռազմավարական, այնպես էլ բյուջետավորման փուլերի փաստաթղթերը: Թեև այդ նյութերից առավել ուշագրավ է օրենքի ուժ ունեցող տարեկան բյուջեն, սակայն որոշ անդրադարձ կիրականացվի նաև բյուջետային գործընթացի նշված աջակից նյութերին:

Նախ, նշենք, որ բյուջեի ուղերձը բավականին նեյտրալ և հպանցիկ է անդրադառնում ժողովրդագրական խնդիրներին: Ուղերձում նշված է միայն այն հանգամանքը, որ կառավարությունը կշարունակի իր գործունեությունը մի շարք ուղղություններով: Նման ներկայացումը խիստ նեյտրալ է և 2012թ. բյուջեում արտացոլված ծախսային գումարներից կախված կամ կորելացված չէ: Այսինքն, նույնանման շարադրանք կարող է հայտնվել ցանկացած տարվա բյուջետային ուղերձում:

Բացի այդ, շատ դեպքերում (եթե ոչ բոլոր) բյուջեի ուղերձի կառուցվածքը ավելի է համապատասխանում գերատեսչական խմբավորման, այլ ոչ թե կառավարության հռչակված ծրագրերի ու գերակայությունների: Դա է պատճառը նրա, որ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության մեջ ամրագրված գերակայությունները միասնական տեսքով անհնար է տեսնել բյուջեի ուղերձում: Այս խնդիրն, ավելի լայն իմաստով, անդրադարձ է արվում սույն կայքի «Բացահայտված խնդիրներ ու Առաջարկություններ» մասում: Այնուամենայնիվ, ԺՔՌ տեսանկյունից բյուջեի ուղերձում գետեղված տեղեկատվությունը հնարավոր է դիտարկել միայն տարբեր հատվածներում տեղ գտած տեղեկատվության համախմբումից հետո միայն: Այս պահին, փաստորեն, սոցիալական պաշտպանության ոլորտին առնչվող հատվածում շարադրված է միայն պետական ծրագրում տեղ գտած ուղղությունների ցանկը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բյուջեի ուղերձի հիմնական նպատակն է տեղեկացնել գերակա ծրագրերով բյուջեում նախատեսված ծախսային ուղղությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ժողովրդագրական խնդիրը հռչակվում է որպես գերակա, ապա **ԺՔՌ նման սահմանափակ ներկայացումը կարելի է համարել անբավարար:**

Այսբանից կարելի է եզրակացնել, որ 2012թ. բյուջեի ուղերձի և 2012թ. պետական ծրագրի կապը հստակ չէ: Եվ դրա պատճառը թե՛ բովանդակային է և թե՛ ուղերձի ներկայիս ձևաչափի հակիրճ (բայց կոնկրետ) ու ծրագրային դարձնելու անհրաժեշտությունը: Այս խնդիրը միայն տեխնիկական չէ և արտացոլում է մեր երկրում փաստաթղթերի մշակման գործընթացների մեխանիստական լինելու հանգամանքը:

Անդրադառնալով բյուջետային փաստաթղթերի ամբողջական փաթեթի ուսումնասիրությանը, նախ պետք է նշել, որ ի տարբերություն պետական ծրագրերի նախորդ տարբերակների 2012թ. ծրագրի միջոցառումների ցանկը խմբավորված չէ ըստ գերակայությունների: Այդ իսկ պատճառով որոշ միջոցառումներ դուրս են մնում վերևում նշված վեց գերակայություններից և դրանց փոխկապակցվածության աստիճանի:

## **Խնդիր 1. Ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործումը**

Այս խնդրի համար նախատեսվող ռեսուրսները, ամենայն հավանականությամբ, գետեղված են համապատասխան գերատեսչությունների աշխատակազմի վարձատրությանը և հարակից ծախսերի ֆինանսավորման մեջ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա պահին համապատասխան միջոցառումները առանձնացված չեն ներկայացվում պետական բյուջեում կամ այլ հարակից փաստաթղթերում, ուստի բյուջեի ու պետական ծրագրի փոխկապակցվածության աստիճանի գնահատականը փաստաթղթային վերլուծությամբ դառնում է անհնար: Բացի այդ, 2012թ. պետական ծրագրի միջոցառումների ցանկում նույնպես առկա չեն իրավական դաշտի բարելավմանը առուղված միջոցառումներ: Նշվածի պատճառը նույնպես կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ այդ գերակայության համար նախատեսված աշխատանքները հանդիսանում են համապատասխան գերատեսչության ընթացիկ աշխատանք և կառավարվում է ոչ թե բյուջետային այլ քաղաքացիական ծառայության բարեփոխումների մաս կազմող կառավարման համակարգերով (կատարողական ծրագրերով):

## Խնդիր 2. Ծնունդների սոցիալական խթանումը՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով

Այս խնդիրը կարելի է համարել ԺՔՌ այն ուղղությունը, որը շարունակաբար և հստակ դիտարկվում է բյուջետային փաստաթղթերում, որպես հենց ԺՔՌ գերակայություն: Մասնավորապես, այս խնդրի ուղղությամբ հատկացվող գումարները ամրակցվում են ԺՔՌ նպատակների հետ: Ավելին, այս ուղղությամբ նախատեսված միջոցառումների մի մասը նաև հանդիսանում են բյուջետային «Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագիր» ծրագրի մաս: Շնորհիվ ծրագրային բյուջետավորման աստիճանական ներդրման գործընթացի բյուջետային փաստաթղթերում և ծրագրային համակարգերում ներդրվել է «ծրագրային դասակարգումը», որի հիմնական նպատակն է համախմբված ներկայացնել միևնույն քաղաքականության նպատակին հետապնդող միջոցառումները մեկ ծրագրի շրջանակում: Այսպես, «Ժողովրդագրական վիճակի բարելավման» ծրագիրը համախմբում է ԺՔՌ նպատակներից բխող ուղղակի միջոցառումները: Դրանք են.

- Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների ծրագրի իրականացման ապահովում
- Երեխային ծննդյան միանվագ նպաստ
- Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ

ԺՔՌ փաստաթղթի տրամաբանության տեսանկյունից նման կառուցվածքը սահմանափակ է: Սակայն, կառուցվածքը և բովանդակությունը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԺՔՌ դրոյթներից բխող գերակայությունների զգալի մասը հանրային կառավարման տեսանկյունից հանդիսանում են ժողովրդագրությանը նպաստող/երկրորդական, բայց ոչ առաջնային դրոյթներ (օրինակ՝ առողջապահության ծրագրերի հիմնական նպատակը չի հանդիսանում ժողովրդագրությունը, սակայն այն նպաստում է դրա բարելավմանը): Բյուջետային այս ծրագրի կառուցվածքի, բովանդակության, ցուցանիշների մշակման և այլ հարցերին սույն հաշվետվությունը անդրադարձ կանի նաև ստորև՝ «Բացահայտված խնդիրներ ու Առաջարկություններ» բաժնում:

Այնուամենայնիվ, նշված երեք առաջնային (ու ժողովրդագրության բյուջետային ծրագրի մաս կազմող) միջոցառումների գծով 2012թ. բյուջեի հետ փախկապակցվածությունը հետևյալն է.

### Ծննդյան միանվագ նպաստ

Ինչպես դիտարկվում է ստորև բերված Աղյուսակ 1-ում, մինչև 2009թ. այս միջոցառման ուղղությամբ իրականացվող ծախսերը բավականին համեստ էին: Այնուհետև, ժողովրդագրական խնդիրների հնչեղության աճին զուգահեռ նկատելի է այս ծրագրի ուղղված գումարների զգալի աճ: Մասնավորապես, 2009թ.-ին տեղի ունեցած զգալի աճը (մոտ երեք անգամ) հիմնականում պայմանավորված է տրամադրվող գումարների աճով (առաջին երկու և երրորդ և ավելի երեխաների համար):

Աղյուսակ 1. Ծննդյան միանվագ նպաստի բյուջետային ցուցանիշները 2006-2012թթ.

հազ.դրամ	2006	2007	2008	2009	2010	2011	2012
շահառու, պլան	35,728	37,437	37,713	40,147	40,609	44,260	43,883
շահառու, փաստ	29,201	38,917	38,303	45,426	31,594	38,462	
գումար, պլան		1,310,286	1,319,955	4,077,591	4,276,057	4,675,020	4,561,930
գումար, փաստ	1,027,845	1,350,714	1,335,559	5,065,939	4,712,782	4,273,988	

Աղբյուր. համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքներ, ԱՍՀՆ ծրագրային բյուջետավորման մոնիտորինգային հաշվետվություններ

2011թ. փաստացի ծախսերի պլանայինից նվազ լինելը պայմանավորված է փաստացի ծնունդների և, հետևաբար, նպաստ ստանալու իրավունք ձեռք բերած շահառուների նվազման հետ (թե՛ ֆինանսական թե՛ ոչ-ֆինանսական ցուցանիշները նվազել են մոտ 10%-ով):

Հատկանշական է, որ երրորդ և ավելի երեխա ունենալու համար նախատեսված զգալիորեն ավելի մեծ փոխհատուցման ժամանակահատվածը կորելացվում/թղթակցում է այդ կատեգորիայի ծնված երեխաների թվաքանակի աճի հետ: Բնականաբար, առկա վիճակագրական տվյալները դեռ բավարար չեն հստակ պատճառա-հետևանքային կապի առկայությունը հիմնավորելու համար, սակայն վերջին տարիների ընթացքը, առնվազն, զուգակցում է տարվող քաղաքականության հետ:

**Աղյուսակ 2. Երեխաների կենդանի ծնունդների վիճակագրություն 2006-2010թթ.**

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
<< ընդամենը	37,639	40,105	41,185	44,413	44,825
ընտանիքում 3-րդ երեխա	3,758	4,263	4,520	5,289	5,683
ընտանիքում 4-րդ երեխա	705	708	761	849	929
ընտանիքում 5-րդ և դրանից հետո ծնված երեխա	304	332	342	372	378
3-րդ և դրանից հետո (ընդամենը)	4,767	5,303	5,623	6,510	6,990

Աղբյուր. ԱՍՀՆ 2013-2015թթ. ՄԺԾԾ հայտ

Ինչպես դիտարկվում է վերևում բերված Աղյուսակ 2-ում, 3-րդ և ավելի երեխաների ծնունդների թվաքանակը աճում է ըստ տարիների: Ընդ որում, աճում է ոչ միայն բացարձակ թվերով, այլև նրա տեսակարար կշիռը կենդանի ծնունդների թվաքանակի մեջ: Դիտարկված բոլոր տարիներին նկատվում է 3-րդ և ավելի երեխաների առաջանցիկ աճը ընդհանուր աճի մեջ (տես՝ Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3. 3-րդ և ավելի երեխաների հարաբերական աճը 2007-2010թթ.**


	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
3-րդ և ավելի երեխաների կշիռը ընդհանուրում	12.7%	13.2%	13.7%	14.7%	15.6%
Տարեկան աճ, << ընդամենը		107%	103%	108%	101%
Տարեկան աճ 3-րդ և ավելի երեխա)		111%	106%	116%	107%

Աղբյուր. ԱՍՀՆ 2013-2015թթ. ՄԺԾԾ հայտ

Այս ծրագրի գծով ԺՔՌ և բյուջեի կապի առկայությունը, ինչպես արդեն իսկ նշվել էր, բավարար աստիճանի դիտարկելի է: Սակայն, ի լրումն վերևում նշվածի, հարկ է նշել նաև մոտակա տարիներին այս հարցում նախատեսվող զգալի փոփոխությունները: Այսպես, դեռ 2012-2014թթ. ՄԺԾԾ փաստաթղթում հստակ արձանագրվել էր 2014թ.-ից նախատեսված զգալի աճը՝ 3-րդ և ավելի երեխաների համար տրամադրվող գումարների: Այսպես, 2014թ.-ից նախատեսված է, որ ներկայիս 430,000 դրամ փոխհատուցման փոխարեն 3-րդ և 4-րդ երեխաների համար տրամադրվող գումարը կլինի 1,000,000 դրամ, իսկ 5-րդ և ավելի երեխայի համար՝ 1,500,000 դրամ: Սա մոտ երկու անգամ կմեծացնի այս միջոցառման ֆինանսական աշժեքը:

**Ընդհանուր առմամբ, ԺՔՌ միջոցառումների վերջին ժամանակահատվածում դիտարկումը ցույց է տալիս, որ երեխաների ծննդյան նպաստը առավել ուղղակիորեն փոխկապակցվածն է ԺՔՌ նախատեսված դրույթների հետ:** Գծապատկեր 1-ում հստակ ներկայացվում է այդ զգալի փոփոխությունը: 2014թ. նախատեսված գումարը համադրելով 2006թ. փաստացի ծախսերի հետ ստացվում է ավելի քան 9 անգամ աճ, ինչը խիստ համահունչ է ԺՔՌ գերակայություններին և զգալիորեն կարող է ազդել ժողովրդագրական իրավիճակի վրա:

Գծապատկեր 1. Ծննդյան նպաստների ֆինանսավորման դինամիկան 2007-2014թթ.



**Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ**

Այս միջոցառումը նույնպես հանդիսանում է ծողովրդագրության բյուջետային ծրագրի մաս: Ծրագրի գծով ծախսերը նպատակ ունեն աջակցելու երեխա ունեցող ընտանիքներին և մասնակիորեն փոխհատուցել երեխայի խնամքի ընթացքում գոյացող ծախսերը (ներառյալ նաև իմպլիցիտ ծախսերը):

Ծրագրի գծով խոշոր փոփոխություն տեղի է ունեցել 2009թ. փոխհատուցման գումարի աճի տեսքով: Դրանից հետո փոխհատուցման գումարը մեկ շահառու ընտանիքին մնացել է կայուն՝ տատանվելով 261,000 - 278,000 դրամ շրջակայքում (հաշվարկը ստորև բերված Աղյուսակ 4-ի փաստացի ծախսերի և շահառուների թվաքանակից):

Աղյուսակ 4. Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի հատկացման վիճակագրություն 2007-2012թթ.

	2007	2008	2009	2010	2011	2012
շահառու, պլան	7,800	6,000	6,000	8,058	10,000	11,000
շահառու, փաստ	4,262	4,489	7,114	9,284	10,495	
գումար, պլան, հազ.դրամ	215,280	215,280	1,295,998	1,740,528	2,340,000	2,376,000
գումար, փաստ, հազ.դրամ	231,995	219,140	1,860,143	2,566,862	2,921,667	

Աղբյուր. համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքներ, ԱՍՀՆ ծրագրային բյուջեֆավորման մոնիտորինգային հաշվետվություններ

Միջոցառման ուղղությամբ ծախսերի դիտարկող աճը 2009թ. ի վեր պայմանավորված է շահառուների աճով: Որոշ իմաստով, այս հանգամանքը նույնպես կարելի է դիտարկել, որպես ԺՔՌ ռազմավարության իրականացման հետ բյուջետային հատկացումների փոփոխակապակցվածության փաստ: Համաձայն 2012-2014թթ. ՄԺԾՄ փաստաթղթի այս չափավոր փոխկապակցվածության աստիճանը կպահպանվի նաև հաջորդող երկու տարիների ընթացքում: Այսպես, 2013թ. նախատեսվում է այս

Եթե հանրապետությունում չիրականացվեր ընտանեկան նպաստի ծրագիրը ապա, 2008 թվականին ծայրահեղ աղքատության մակարդակը կլիներ 4.6 % 1.6 %-ի դիմաց, աղքատությունը՝ 30.0 %, 27.1 %-ի դիմաց, իսկ 2009 թվականին՝ ծայրահեղ աղքատությունը՝ 6.4 %, 3.6 %-ի դիմաց և աղքատության մակարդակը՝ 36.5 % 34.1 %-ի դիմաց:

ՀՀ ԱՎԾ 2009 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների ընտանեկան նպաստի ծրագրի ազդեցության գնահատական

միջոցառմանը հատկացնել 2,419,200 դրամ, իսկ 2014թ.՝ 2,462,400:

### **Ընտանեկան նպաստներ**

Ընտանեկան նպաստների համակարգը, ի տարբերություն վերևում նշված նպաստների, իր հիմնական առաքելությամբ նպատակաուղղված չէ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: Այդուհանդերձ, այն էական ազդեցություն կարող է ունենալ ընտանեկան բարեկեցության, և, հետևաբար, ծնելիության մակարդակի վրա<sup>1</sup>: Այս ենթադրությունը էլ ավելի հիմնավոր է դառնում հաշվի առնելով ընտանեկան նպաստի համակարգի խիստ երեխայամետ լինելը: Նշենք, որ 2012թ. պետական ծրագրի միջոցառումների պլանում այս ուղղությամբ հստակ աշխատաքներ նախատեսված չեն:

Այնուամենայնիվ, ընտանեկան նպաստների համակարգը համահունչ լինելով ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակի հետ, ետճգնաժամային ժամանակահատվածում շարունակում է ներգրավվածների նպատակաուղղվածության աստիճանի բարձրացմանը ուղղված քաղաքականությունը, ինչը բերում է շահառուների քանակի նվազեցմանը՝ 2011թ. հասցնելով այն 92,000:

Միևնույն ժամանակ, համաձայն 2012-2014թթ. ՄԺԾժ փաստաթղթի, ընտանեկան նպաստների համակարգին նախատեսվում է շարունակել ֆինանսավորման աճը (39,792,260 և 42,003,840 հազ. դրամ 2013 և 2014թթ. համար): Այս թվերը ենթակա են ճշգրտման 2013-2015թթ. ՄԺԾժ փաստաթղթի մշակման ընթացքում, քանի որ նախորդող ՄԺԾժ նախատեսված գումարները արդեն իսկ 2012թ. գերազանցել էին նպատակադրված ցուցանիշը:

**Այսպիսով, այս ծրագրի գծով պատկերը հակասական է. մի կողմից ունենք կայացած, բավարարից բարձր աստիճանի նպատակային, երեխայամետ, բյուջետային ֆինանսավորման աճ պարունակող ծրագիր, որը ի վերջո, նպաստում է ժողովրդագրական իրավիճակի բարելավման վրա: Մյուս կողմից ունենք շահառուների թվաքանակի կայուն նվազեցման տենդենցներ և դա ճգնաժամային ժամանակահատվածում, ինչը բացասաբար կարող է ազդել ընտանիքներում երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:**

### **Զբաղվածություն**

Հարկ է նշել, որ գործազրկության ազդեցությունը ժողովրդագրական իրավիճակի վրա հիմնականում պետք է պայմանավորել միգրացիոն հոսքերի տեսանկյունից: Ծննդաբերության մակարդակի վրա գործազրկության ազդեցությունը միանշանակ չէ: Տրամաբանական է ենթադրել, որ գործազրկության աճը կարող է բացասաբար ազդել ընտանիքի պլանավորման հարցում: - Միևնույն ժամանակ, Հայաստանում գործազուրկների մոտ 70%-ը կանայք են<sup>2</sup>: Ամբողջ աշխարհում բավականին ամուր կորելացիոն կապ կա զբաղված կանանց աճի և դրա պատճառով երեխաների քանակի նվազման հետ: Այդ իսկ պատճառով, կարելի է համարել, որ գործազրկությունը առավել ազդեցիկ է ժողովրդագրական իրավիճակի վրա միգրացիոն հոսքերի միջոցով ազդեցության խողովակներով:

Այն նյութի շրջանակներում, ուսումնասիրվել են պետական բյուջեի, ՄԺԾժ, ինչպես նաև բյուջեի ուղերձի հավելված հանդիսացող «Զբաղվածության կարգավորման 2012թ. պետական ծրագիրը»:

Վերջինում բավականին հստակ ու մանրակրկիտ ներկայացված են ոչ միայն նախատեսված միջոցառումները, այլև դրանց հաշվետվողականությունը ապահովող ուղղակի և վերջնական արդյունքի ցուցանիշները<sup>3</sup>: Ներկայացված է նաև այդ ծրագրային դրույթների տրամաբանական

<sup>1</sup> Ի լրումն նշվածի, ընտանեկան նպաստի համակարգում գործում է նաև երեխաների ծննդյան և 3-րդ և ավելի երեխայի ծննդյան համար լրացուցիչ 50,000-ական դրամ միանվագ վճարների համակարգը

<sup>2</sup> Տես «Զբաղվածության կարգավորման 2012թ. պետական ծրագիր», ՀՀ 2012թ. բյուջեի ուղերձ, հավելված 4, էջ 564

<sup>3</sup> Տես «Զբաղվածության կարգավորման 2012թ. պետական ծրագիր», 2012թ. բյուջեի ուղերձ, էջ 568

շրջանակը: Սա խիստ ողջունելի է և անհրաժեշտ է հետևողականորեն ամրապնդել հստակ ծրագրային ցուցանիշներով առաջնորդվող պետական ծրագրերի ներմուծումը բյուջետային համակարգ և դրանց դիմաց հաշվետվողականության աճը: Այնուամենայնիվ, ստորև բերված ֆինանսական ցուցանիշները և, առավելապես, դրանց կայուն մակարդակը վերլուծվող ժամանակահատվածում որոշակի անհվաստահույություն են ներշնչում այդ նպատակադրված ցուցանիշների հասանելիության վերաբերյալ: Ընդհանրապես, բյուջետային համակարգում հազվադեպ են դեպքերը, երբ որևիցե ոլորտում իրականացվում է նշանակալի բարելավում առանց բյուջետային հատկացումների մակարդակի փոփոխության:

Այսպես, նույն ծրագրի 7-րդ կետի 1-ին ենթակետում նշվում է, որ նախատեսվում է ավելացնել խորհրդատվության մակարդակը 15%, ինչպես նաև 4-րդ ենթակետում նշվում է աշխատանքի տեղավորվածների թվի աճ՝ առնվազն 20%-ով: Եվ դա նախատեսվում է իրականացնել զբաղվածության ընդհանուր ծրագրերի մոտ 18% նվազման պարագայում: Եթե խորհրդատվության քանակի աճը զուգակցվում է 16% ֆինանսավորման աճով, ուստի և հնարավոր է իրականացնել, ապա այնպիսի կարևոր վերջնական ցուցանիշ, ինչպիսին է աշխատանքի տեղավորվածների 20%-ոց աճը նման բյուջետային սահմանափակումների պարագայում թվում է անիրատեսական:

Այնուամենայնիվ, բյուջետային պատկերը հետևյալն է.

**Աղյուսակ 5. Զբաղվածության ծրագրերի ֆինանսավորումը 2010-2012թթ.**

հազ. դրամ	2010	2011	2012	2011/10	2012/11
<b>Զբաղվածություն</b>	<b>5,597,938</b>	<b>6,005,676</b>	<b>4,952,326</b>	<b>107%</b>	<b>82%</b>
Վարձատրվող հասարակական աշխատանքներ	689,500	689,500	0	100%	0%
Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցություն	2,750	1,860	2,410	68%	130%
Աշխատաշուկայում անմիջուակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին	64,800	89,770	70,200	139%	78%
Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպում	13,090	13,090	13,090	100%	100%
Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ	20,610	20,686	24,006	100%	116%
Գործազրկության նպաստ	4,536,000	4,878,817	4,503,600	108%	92%
Գործազուրկների, աշխատաշուկայում անմիջուակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցում	232,900	228,900	228,900	98%	100%
Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում	15,900	15,900	13,406	100%	84%
Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացում	3,400	2,550	2,250	75%	88%
Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում	5,000	5,000	5,000	100%	100%
Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայություններ	4,200	4,200	4,200	100%	100%
Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և	9,789	15,764	15,764	161%	100%

հազ. դրամ	2010	2011	2012	2011/10	2012/11
խորհրդատվության ծառայություններ					
Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում	0	35,640	58,500		164%
Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում	0	4,000	11,000		275%

Աղբյուր. համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքներ

Ինչպես ներկայացված է Աղյուսակ 5-ում, ամենաէական փոփոխությունը զբաղվածության ծրագրերում կայանում է «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի դադարեցումը: Թեև բյուջեի ուղերձում նշվում են տեղական ինքնակառավարման մարմինները ու նվիրատու կազմակերպությունները որպես այդ ծրագրի ֆինանսավորման աղբյուր, այնուամենայնիվ այս ծրագրի նախկին մասշտաբներով գործարկումը թվում է անհնար: Սա առավելապես հիմնավոր է թվում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենտրոնական կառավարության կողմից այդ ծրագրի կատարումը ՏԻՄ մակարդակին փոխանցելիս այս որոշումը չի զուգակցվել վերջիններիս լրացուցիչ ֆինանսավորման փաթեթի առաջարկով:

Դիտարկելով այս ամենաէական փոփոխությունը և այլ միջոցառումների ֆինանսավորման դինամիկան կարելի է եզրակացնել, որ **այս ուղղությամբ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը նպաստավոր և նախաձեռնողական պայմաններ 2012թ. բյուջեն չի նախատեսում:**

### Նախադպրոցական խնամք

**Նախադպրոցական խնամքի (մանկապարտեզների) ֆինանսավորման գծով 2012թ. պետական բյուջեն ակնհայտորեն բարելավել է ԺՔԲ- և պետական ծրագրի հետ փոխկապակցվածությունը:** Դա, մասնավորապես, արտահայտվում է և՛ հատկացվող գումարի աճով և՛ ընդգրկվածության շրջանակի ընդլայնմամբ: Նախկին 4 մարզպետարանների փոխանեն 2012թ. նախատեսվում է ֆինանսավորում հատկացնել արդեն 8 մարզպետարանի, որի հետևանքով կընդլայնվի նաև այս միջոցառմանը շահառուների թվաքանակի ընդգրկվածությունը:

Աղյուսակ 6. Նախադպրոցական խնամքի ֆինանսավորումը 2011-2012թթ.

	2011	2012
<< Արագածոտնի մարզպետարան	21,895	32,751
<< Արարատի մարզպետարան	22,213	38,666
<< Արմավիրի մարզպետարան	0	13,835
<< Գեղարքունիքի մարզպետարան	0	12,459
<< Լոռու մարզպետարան	13,222	13,206
<< Շիրակի մարզպետարան	39,666	36,882
<< Սյունիքի մարզպետարան	0	3,087
<< Վայոց ձորի մարզպետարան	0	5,785
<b>Ընդամենը</b>	<b>96,996</b>	<b>156,669</b>

Աղբյուր. համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքներ

Հաշվի առնելով վերը նշվածը, կարելի է փաստել, որ 2012թ. պետական բյուջեի ու ԺՔԲ 2012թ. պետական ծրագրի կապը ոչ միայն առկա է, այլև հետևողականորեն զարգացող:



### Խնդիր 3. Երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի աստիճանական բարելավումը

Այս խնդրի շրջանակներում վերլուծություն կատարելիս հիմք է ընդունվել պետական բյուջեում երիտասարդական հարցերին ուղղվող գործառնական դասակարգման 08.04.01 դասի սահմաններում նախատեսված հատկացումները: Այդ դասով նախատեսված հատկացումների ընդհանուր պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 7. 2010-2012թթ. պետական բյուջեներով սահմանված հատկացումները երիտասարդական ծրագրերին

հազ. դրամ	2010	2011	2012
Երիտասարդական ծրագրեր	276,396	280,722	<b>255,810</b>
Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ	8,000	8,000	8,000
«Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության ճանաչողական այցելություններ Հայաստան	35,000	75,000	75,000
Աջակցություն Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը	12,012	12,012	12,012
«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում	0	0	<b>212,000</b>

Աղբյուր. համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքներ

Ինչպես տեսնում ենք, հիմնականում այս ուղղությամբ ծախսերը մնացել են անփոփոխ: Բացառություն են կազմում միայն «Երիտասարդական ծրագրեր» և «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրերի գծով հատկացումները: Եվ եթե առաջինի պարագայում որոշակի նվազեցումը պայմանավորված է համապատասխան պետական կառույցի (ՊՈԱԿ) լուծարման հետ, ապա երկրորդի պարագայում այդ հանդիսանում է նոր ծրագրի պետական բյուջեում ամրագրման փաստ: Ընդ որում, ի տարբերություն այլ երիտասարդական ուղղվածությամբ ծրագրերի, բնակարանի ձեռքբերմանը աջակցելու այս ծրագիրը ուղղակիորեն փոխկապակցվում է ժողովրդագրության իրավիճակի բարելավմանը ուղղված քայլերի հետ (և ներառված է 2012թ. ԺՔՌ պետական ծրագրի միջոցառումների ցանկում):

Այս նախաձեռնությունը ուժի մեջ է մտել 2010թ. և դրա համար հիմք են հաղնիսացել կառավարության 2010թ. հունվարի 29-ի 98-Ն և նույն թվականի նոյեմբերի 11-ի 1470-Ն որոշումները:

Նախաձեռնությունը, ինքնին, խիստ համահունչ է ընտանիքների համար բարենպաստ պայմանների ստեղծման հոչակված խնդրին: Այս դրույթը հիմնավորվում է համապատասխան հարցման աղբյուրներով<sup>4</sup>, որոնք վկայում են, որ հարցվածների մոտ 90%-ի կողմից ընտանիքի կազմավորման պարտադիր պայման են դիտարկում բնակարանի հարցի լուծումը, իսկ 78.6%-ը այն փոխկապակցում են երեխաների հնարավոր քանակի հետ: Ուստի ծրագրի գործածումը և զարգացումը ուղղակիորեն կարելի է փոխկապակցել ժողովրդագրության իրավիճակի բարելավմանը ուղղված կառավարության մտադրություններին:

Իսկ այս ծրագրի դինամիկ պատկերի վառ ապացույցն է հանդիսանում հետևյալ հանգամանքները.

ա. ծրագրի մեկնարկից հաշված ամիսներ անց անհրաժեշտություն եղավ ավելի հստակեցնել վարկերի տրամադրման պայմանները՝ գյուղական վայրերում ավելի նախաձեռնողական քայլեր իրականացնելու համար

<sup>4</sup> Տես՝ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», 2007թ., էջ 46

բ. 2012-2014թթ. ՄԺԾՑ փաստաթղթում ամրագրված 100 մլն. դրամ հատկացումը ամբողջ միջին ժամկետ հատվածում արդեն 2012թ. պետական բյուջեն մշակելիս անհրաժեշտ եղավ ավելի քան երկու անգամ ավելացնել (տես Աղյուսակ 8):

**Աղյուսակ 8. «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագրի ֆինանսավորման դինամիկան**

հազ. դրամ	2012-2014թթ. ՄԺԾՑ			2012թ. բյուջե
	2012	2013	2014	
«Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում	100,000	100,000	100,000	212,000

Աղբյուր. 2012-2014թթ. ՄԺԾՑ, 2012թ. պետական բյուջեի մասին օրենք

**Այս առումով, 2012թ. պետական բյուջեի ու 2012թ. պետական ծրագրի փոխկապակցվածությունը կարելի է համարել հիմնավորված:** Ծրագրի յուրահատկությունների ու երկարաժամկետ հատվածում հնարավոր խնդիրների մասին անդրադարձ է արվում նաև սույն հաշվետվության «Բացահայտված խնդիրներ ու Առաջարկություններ» մասում:

#### **Խնդիր 4. վաղաժամ մահացությունների թվաքանակի նվազեցումը եվ Խնդիր 5. բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության վիճակի բարելավումը**

Բնակչության ընդհանուր առողջության բարելավման հարցերը բյուջեում արտացոլվում են հիմնականում առողջապահության նախարարության ծախսերի միջոցով: Ընդհանուր առմամբ, դժվար է առողջապահության բնագավառի 2012թ. բյուջեն համարել նախաձեռնողական: Աննշան ճշգրտումներից զատ 2012թ. բյուջեն կրկնում է 2011թ. բյուջեն թե՛ կառուցվածքի, գերակայությունների և թե՛ ծախսերի չափաքանակների տեսանկյունից: Նշվածին անհրաժեշտ է ավելացնել այն, որ վեջին տարիների ընթացքում (և ի տարբերություն 2012թ. բյուջեի) առողջապահության ոլորտի բյուջեում նկատելի են որոշ ուղղություններով հստակ ծրագրային մոտեցումներ և - համապատասխան ֆինանսավորում: Ասվածը վերաբերվում է թե առողջության առաջնային պահպանման թե ծննդոգնության ենթաոլորտներում իրականացված նախաձեռնողական քաղաքականությունները: Երկուսն էլ բավականին նպաստավոր էին ժողովրդագրական իրավիճակի բարելավման հարցում և դրանց կապը բյուջեում ավելի քան նկատելի էր: Եվ այս տեսանկյունից սույն հաշվետվությանը նախորդող 2011թ. բյուջեի վերլուծությունը, որոշ առումներով, ավելի դրական գնահատական էր ներկայացնում առողջապահության բնագավառի 2011թ. բյուջեի ու 2011թ. ժողովրդագրական քաղաքականության պետական ծրագրի համահունչ լինելու մասին: Նշվածը, ցավոք, չի կարելի նշել 2012թ. բյուջեի վերլուծությունը կատարելիս, ինչը ներկայացված է նաև Աղյուսակ 9-ում:

**Աղյուսակ 9. Առողջապահության բնագավառի ծախսերը և դինամիկան 2010-2012թթ.**


	2010	2011	2012	2011/10	2012/11
<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	<b>55,249,491</b>	<b>62,461,474</b>	<b>65,126,483</b>	<b>113%</b>	<b>104%</b>
Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	3,687,525	3,687,525	3,687,525	100%	100%
Դեղագործական ապրանքներ	3,687,525	3,687,525	3,687,525	100%	100%
Արտահիվանդանոցային ծառայություններ	21,033,326	23,889,406	23,803,162	114%	100%
Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	8,048,514	8,751,953	8,621,339	109%	99%
Մասնագիտացված բժշկական ծառայություններ	5,337,114	5,846,976	5,864,263	110%	100%
Ստոմատոլոգիական ծառայություններ	837,713	840,021	840,358	100%	100%

	2010	2011	2012	2011/10	2012/11
Պարաբժշկական ծառայություններ	6,809,986	8,450,457	8,477,203	124%	<b>100%</b>
Հիվանդանոցային ծառայություններ	21,198,583	27,370,938	27,080,872	129%	<b>99%</b>
Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	5,984,544	6,732,352	6,305,260	112%	<b>94%</b>
Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	6,030,928	6,995,641	7,245,641	116%	<b>104%</b>
Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ	9,183,112	13,642,945	13,529,971	149%	<b>99%</b>
Հանրային առողջապահական ծառայություններ	2,796,361	2,961,069	3,069,445	106%	<b>104%</b>
Հանրային առողջապահական ծառայություններ	2,796,361	2,961,069	3,069,445	106%	<b>104%</b>
Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	6,533,695	4,552,537	7,485,480	70%	<b>164%</b>
Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	5,494,247	3,507,333	6,426,873	64%	<b>183%</b>
Առողջապահության (այլ դասերին չպատկանող)	1,039,448	1,045,204	1,058,607	101%	<b>101%</b>

Զգալի աճ է նախատեսված միայն «Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)» և «Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր» ուղղություններով, ինչը պայմանավորված է «Իմունոկանխարգելման ազգային ծրագրի» շրջանակներում նոր պատվաստանյութերի ձեռքբերմամբ, ինչպես նաև Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսված 4 մլրդ. դրամ ծախսով: Սակայն, նշված երկու ուղղություններն էլ անմիջականորեն չեն փոխկապակցվում ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և հատկապես վերարտադրողական առողջության հետ:

Եթե առողջապահության ֆինանսավորման պատկերը դիտարկենք միջին ժամկետ հատվածում, ապա ակնհայտ է, որ չնայած հոչակված դրույթների այն չի հանդիսանում գերակայություն: Մասնավորապես, համաձայն 2012-2014թթ. ՄԺԾ առողջապահության ծախսերի կշիռը ՀՆԱ-ում անգամ կտրուկ նվազում են (տես Գծապատկեր 2), ինչը, հիմնականում, բացատրվում է արտաքին աջակցության ծավալների նվազման հետ:

**Գծապատկեր 2. Առողջապահության ծախսերը ՀՆԱ նկատմամբ**



Համաձայն նույն աղբյուրի, ծախսերը կունենան հետևյալ պատկերը: Եվ սա հաշվի չառնելով այն փաստը, որ արդեն իսկ 2012թ. պետական բյուջեն հաստատելիս ՄԺԾ ամրագրված գումարը չի պահպանվել և նվազեցվել է մոտ 4 մլրդ. դրամով:

**Աղյուսակ 10. Առողջապահության բնագավառի ծախսերը միջին ժամկետ հատվածում**

	ՄԺԾԾ		
	2012 թ.	2013 թ.	2014 թ.
<b>Առողջապահությունը ընդամենը (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի)</b>	<b>68,655.5</b>	<b>59,472.2</b>	<b>60,507.7</b>
1. Արտահիվանդանոցային ծառայություններ (առողջության առաջնային պահպանում)	23,586.3	23,602.0	23,887.8
2. Հիվանդանոցային ծառայություններ	27,370.9	27,411.8	28,392.2
3. Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	3,687.5	3,687.5	3,687.5
4. Հանրային առողջապահական ծառայություններ	3,013.5	3,065.3	3,116.8
5. Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	1219.1	1219.1	1219.1
6. ՀՔ վարկային և դրամաշնորհային ծրագրեր	9,778.2	486.5	204.3

Հատկանշական է, որ առողջապահության ծախսերի կառուցվածքում «Արտահիվանդանոցային ծառայություններ» բաժնի, որը ընդհանուր առողջապահական ծախսերի ավելի քան 36%-ն են կազմում, 13 ծախսային ուղղություններից 3-ի գծով ծախսերը նվազել են, 3-ի գծով աճել են (ընդ որում, աննշան, բացառությամբ հեմոդիալիզի անցկացման ծառայությունների), իսկ մնացած ուղղություններով ծախսերը մնացել են նույնը: Այսինքն, **արտահիվանդանոցային ծառայությունների գծով (որոնք զգալիորեն ազդում են հիվանդությունների կանխարգելմանը) ԺՔՌ հետ դրական փոխկապակցվածությունը 2012թ. բյուջեում կարելի է համարել ոչ նկատելի:** Որոշ իմաստով բացառություն է կազմում միայն հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության ընթացքում կատարվող հետազոտությունների գծով նախատեսված աճը մոտ 40 մլն. դրամով, ինչը պայմանավորված է անցկացվող հետազոտությունների շրջանակի ընդլայնմամբ: Այս տեղեկությունը պահպանվում է նաև միջին ժամկետ հեռանկարում, ուստի, առողջապահության բյուջեի ԺՔՌ հետ փոխկապակցվածությունը ներկայում և մոտակա ապագայում աննկատ է:

«Հիվանդանոցային ծառայություններ» ծրագիրը, որը նույնպես խոշորագույններից է առողջապահության բնագավառի բյուջեում, 2012թ. բյուջեում նույնպես աննշան փոփոխությունների է ենթարկվել: Ընդհանուր գումարը նվազել է մոտ 1%-ով, իսկ ծախսային ուղղությունների պատկերը նման է «Արտահիվանդանոցային ծառայությունների» ընդհանուր պատկերին: Այն է, 13 ուղղություններից 7-ի պարագայում գումարը պահպանվել է նախորդ տարվա ցուցանիշին համապատասխան: Բացի այդ, դրանցից մի քանի միջոցառման պարագայում գումարի պահպանումը զուգակցվել է ֆինանսավորվող դեպքերի քանակի պլանի աճի հետ, այսինքն, մեկ ծառայության գինը անգամ նվազել է: Սա չի կարող բարենպաստ անդրադառնալ ծառայության որակի վրա: Եվ սա այն պարագայում, երբ 2012թ. պետական ծրագրի իրավիճակի նկարագրության հատվածում հստակորեն նշվում է գրեթե քոլոր առողջապահական ուղղություններով ահազանգող իրավիճակ և մահացության ցուցանիշների աճ: Օրինակ՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012թ. պետական ծրագրի 8-րդ կետով նշվում է նորագոյություններից մահացության աճ մոտ 2%-ով, մինչդեռ 2012թ. պետական բյուջեն (բացատրագրի 141-142 էջեր) պլանավորում է 2011թ. - համարժեք ֆինանսավորում:

Բացի այդ, ուսումնասիրելով 2012թ. բյուջեի ուղերձի հավելված 2-ը կարելի է եզրահանգել, որ այդ հավելվածում ներկայացված առողջապահական պետական նպատակային ծրագրերը ծրագրային բնույթ չեն կրում: Նրանք չեն պարունակում նպատակային հստակ ուղենիշեր, որոնք հիմք կհանդիսանան հաշվետվողականության համար: «Ծրագրերը» ներկայացնում են չափից ավելի քանակով «գերակայություններ», ինչը, ավելի շուտ, վկայում է դրանց չլինելու մասին: Անդրադառնալով այդ ծրագրերի ու ԺՔՌ 2012թ. պետական ծրագրերի փոխկապակցվածության մասին, ապա կարելի է նույնպես փաստել հստակ կապի բացակայության մասին:

Ընդհանուր առմամբ, **ուսումնասիրելով հիվանդանոցային ծառայություններին առնչվող բյուջետային փաստաթղթերը կարելի է արձանագրել ԺՔՌ դրույթների և պետական ծրագրի հետ փոխկապակցվածության բացակայության փաստը:** Սա առավելապես հատկանշական է

հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2012թ. պետական ծրագրերի միջոցառումների կեսից ավելին անդրադառնում են առողջապահության ոլորտի միջոցառումներին: Կարելի է միայն նշել, որ ժողովրդագրական իրավիճակի վրա դրական ազդեցություն ունեցող որոշ խոշոր նախաձեռնություններ առողջապահության բնագավառում իրականացվել էին մի քանի տարի առաջ (առողջության առաջնային պահպանման ընդհանուր մատչելիության բարձրացում, երեխաներին ուղղված առաջնային ու հիվանդանոցային բուժման հարցում մատչելիության որոշակի աճ, ծննդոգնության ու մայրական խնամքի ենթադրույթներ<sup>5</sup>) ու այդ միջոցառումների ֆինանսավորման շարունակությունը ստատիկ պատկերի վերլուծության տեսանկյունից ապահովում է ժողովրդագրության քաղաքականության հետ որոշ փոխկապակցվածություն: 2012թ. բյուջեն, այնուամենայնիվ, դինամիկ պատկերի վերլուծության տեսանկյունից նման գնահատականի չի արժանանում:

### Սննդի անվտանգություն

Այս ոլորտում բյուջետային հատկացումները ապրում են որոշակի աճ (տես Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Սննդի անվտանգությանը ուղղակիորեն նպաստող միջոցառումների բյուջեն 2010-2012թթ.

հազ. դրամ	2010	2011	2012
<b>Սննդի անվտանգություն</b>	<b>1,302,255</b>	<b>1,308,153</b>	<b>1,390,453</b>
Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	1,000,000	1,000,000	1,000,000
<< կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական կարանտինային սահմանափակումների իրականացում	40,155	40,155	40,155
Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում	72,100	72,100	
Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում			122,100
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում	185,000	190,898	218,198
Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ	5,000	5,000	10,000

Աղբյուր. համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքներ

Ինչպես դիտարկվում է, ասննդի անվտանգության ուղղված գումարները որոշակի աճ են ապահովում 2012թ. բյուջեում: Այդ աճը պայմանավորված է վերջին ժամանակահատվածում համապատասխան կառավարության որոշումներով ամրագրված անհրաժեշտ կառուցվածքային բարեփոխումների ապահովմամբ: **Սա համահունչ է ԺՔՌ 2012թ. պետական ծրագրի միջոցառումների ցանկով ամրագրված դրույթներին:** Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ սննդի անվտանգության բնագավառում գործող կառույցների ինստիտուցիոնալ ճշգրտումները դեռ բավարար չեն սննդի անվտանգության մակարդակի բարելավման համար, որն, իր հերթին, կբերեր առողջապահական ընդհանուր բարելավմանը, որը, իր հերթին, կնպաստեր ժողովրդագրական պատկերի բարելավմանը: Այսպիսով, **հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարեկան ծրագրում ամրագրված դրույթը արդյունքային չէ իր էությունով, ընդհանուր առմամբ, սննդի անվտանգության աստիճանի բարելավմանը նպաստող 2012թ. բյուջետային որոշումների վերլուծությունը կարելի է համարել նեյտրալ կամ ոչ էական ԺՔՌ տեսանկյունից:**

<sup>5</sup> Այս հարցում դրական զարգացումների մասին վկայող նյութեր են հրապարակվել նաև Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ <Կ կողմից (օրինակ՝ տես <http://ast.am/files/Presentation%20AST%20Health%2026%20Sep%202011.pdf>)

## Խնդիր 6. բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմումը

2012թ. ԺՔՌ պետական ծրագրի միջոցառումների պլանը այս խնդրի ուղղությամբ շատ ավելի համեստ է հանդես եկել քան 2011թ. պետական ծրագիրը: Փաստորեն, այս ուղղությամբ նախատեսված է միայն մեկ միջոցառում:

### «Թանգարան անիվների վրա» և «Շարժական գրադարան» ծրագրերի իրականացում

«Թանգարան անիվների վրա» և «Շարժական գրադարան» միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 2012թ. բյուջեի նախագծի փաթեթի մաս կազմող բյուջեի ծախսերի բացատրագրի «ծրագրային բյուջետավորման» համապատասխան հավելվածներում, որտեղ նշված է.

- «Թանգարան անիվների վրա» միջոցառման գծով նախատեսված ոչ ֆինանսական կատարողական ցուցանիշների պլանը, այն է 10 այցելություն տարբեր բնակավայրեր և 8 արտագնա այցելություններ: Այս ուղղությամբ նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները կրկնում են 2011թ. ցուցանիշները:
- «Շարժական գրադարան» միջոցառման գծով նախատեսված մարզային այցելությունների քանակը 2011թ. նկատմամբ մնացել է անփոփոխ (3 մարզ):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս միջոցառումները մաս են կազմում ավելի ագրեգատ «թանգարաններ» ու «գրադարաններ» ծրագրերի, ֆինանսական ցուցանիշների դինամիկան և պատկերը այդ փաստաթղթերից վերհանելը չհաջողվեց: Այնուամենայնիվ, համեմատաբար թարմ այս նախաձեռնությունը միանշափ բարենպաստ ազդեցություն կարող է ունենալ ժողովրդագրական ռազմավարությամբ սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից, ուստի հետագա տարիների այս ծրագրի շարունակումը ր զարգացումը ԺՔՌ տեսանկյունից պետք է դիտարկվի դրական:

Փորձ անելով, այնուամենայնիվ, դիտարկել այս խնդիրը ավելի լայն շրջանակներում (բյուջեի ընդհանուր ապակենտրոնացվածության ու դեկոնցետրացման տեսանկյունից, որը թեև ուղղակիորեն ժողովրդագրական չէ), կարելի է փաստել, որ 2012թ. բյուջեով նախատեսվում է ՀՀ մարզերին մարզպետարանների միջոցով հատկացնել ավելի քիչ բյուջետային միջոցներ քան նախորդող թե՛ 2011 և թե՛ 2010թթ.: Այսպես՝ 2011թ. նախորդող բյուջեի համեմատ հատկացումները մարզպետարանների միջոցով նվազել էին մոտ 5%-ով: Նույն ցուցանիշը արդեն իսկ 2012թ. կազմել է 3%-ով ավելի պակաս քան 2011թ. (Աղյուսակ 12): Նման խոշորացված մոտեցումը ինքնին չի վկայում ապակոնցենտրացված բյուջեի տեղեկանքների նվազեցման մասին:

Աղյուսակ 12. Մարզպետարանների բյուջեները 2010-2012թթ.

	2010	2011	2012
<b>Մարզեր</b>	<b>56,236,201</b>	<b>53,554,900</b>	<b>52,128,697</b>
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	4,912,397	4,797,283	4,778,041
ՀՀ Արարատի մարզպետարան	6,225,266	6,111,189	6,014,109
ՀՀ Արմավիրի մարզպետարան	6,712,114	6,285,253	6,363,409
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	7,294,066	6,867,120	6,923,395
ՀՀ Լոռու մարզպետարան	7,015,806	6,652,638	6,255,470
ՀՀ Կոտայքի մարզպետարան	6,241,572	5,432,701	5,294,420
ՀՀ Շիրակի մարզպետարան	7,599,968	7,397,590	6,718,678
ՀՀ Սյունիքի մարզպետարան	4,426,108	4,294,549	4,253,612
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	2,138,889	2,042,718	1,957,079
ՀՀ Տավուշի մարզպետարան	3,670,015	3,673,858	3,570,485

Աղբյուր. համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքներ

Սակայն, հատկանշական է, որ ուղղահայաց միջբյուջետային տրանսֆերտների հարցում իրավիճակը նույնպես լավատեսական չէ: Այսպես, տեղական ինքնակառավարման մարմիններին պետական բյուջեից համայնքային բյուջեներին համահարթեցման նպատակով ուղղվող միջոցները արդեն իսկ 3 տարի մնում են անփոփոխ՝ 32,488 մլն. դրամ: Մի կողմից, սա պայմանավորված է համահարթեցման համար նախատեսվող գումարների հաշվարկման համար կիրառվող օրենսդրական դրույթներով առաջնորդվելով ՏԻՄ բյուջեներին առնվազն նախորդ տարվա բյուջետային մակարդակը պահպանելու դիրքորոշմամբ: Մյուս կողմից, սակայն, պետական բյուջեից համայնքներին տրամադրվող համահարթեցման տրանսֆերտները պետք է ավելի մեծ կշիռ ունենան համախմբված բյուջեի ու ՀՆԱ-ի ծավալներում:

Ուշագրավ է նաև սահմանամերձ շրջաններում զարգացման տարեկան ծրագրի գծով ծախսերը, որոնք յուրաքանչյուր տարի էականորեն տարբերվում են նախորդից ավելացման կամ նվազեցման ուղղությամբ: Այսպես, եթե 2009թ. այդ ծրագրով ծախսերը կազմում էին ավելի քան 7 մլրդ. դրամ, ապա դրան հաջորդող ժամանակաշրջանում այն նվազեց մինչև 1 մլրդ. դրամ: 2011թ. այն դարձավ ընդամենը 700 մլն. դրամ, իսկ 2012թ. այն կազմեց 1.9 մլրդ. դրամ: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ օբյեկտիվորեն գնահատատել միայն 2012թ. զգալի աճը նախորդ տարվա համեմատ որպես զարգացում:

Այս տեսանկյունից, և հաշվի առնելով նաև վերևում նշված վերլուծության սահմանափակումները, կարելի է արձանագրել, որ **2012թ. բյուջետային հատկացումներում ապակենտրոնացմանը ուղղված խոշոր տեղաշարժեր չեն նկատվում:**

## Համեմատություն նախորդ հաշվետվության հետ

Նախորդ հաշվետվությունը<sup>6</sup> ավելի մեծ քանակով միջոցառումներ է դիտարկել, քանի որ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության շրջանակներում 2011թ. միջոցառումների տարեկան ծրագիրը կառուցվածքային առումով ավելի լայն էր և պարունակում էր թվով ավելի շատ միջոցառումներ: Ներկայիս 6 խնդրի փոխարեն նախկին տարեկան ծրագրում նշվում էին 7 գերակայություններ.

1. անհրաժեշտ տեղեկատվության ապահովում
2. ծնելիության մակարդակի բարձրացում.
3. մահացության մակարդակի նվազեցում
4. բնակչության առողջության պահպանում և բարելավում.
5. միգրացիոն գործընթացների կարգավորում
6. տարածքների զարգացում և բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացում
7. հոգևոր (ոչ նյութական) մշակութային արժեքների պահպանություն և պաշտպանություն
8. Մասնավորապես, ի սպառ բացակայում են միգրացիային («միգրացիոն գործընթացների կարգավորում» գերակայությանը) ուղղակիորեն առնչվող հատվածը:

Ինչպես արդեն իսկ նշվել էր վերևում, որոշ գերակայությունների/ուղղությունների կրճատումը հանգեցրել էր 2012թ. ծրագրում ձևակերպված խնդիրների ու կից ներկայացվող միջոցառումների անհամաձայնություն (օրինակ՝ տեղեկատվական հարցերին առնչվող միջոցառումները չեն թղթակցում ձևակերպված խնդիրների հետ):

<sup>6</sup> Այն կարելի է ներբեռնել <http://ichd.org/download.php?f=594&fc=Demography%20Report.pdf> հասցեից

Միննույն ժամանակ, ծրագրին կից միջոցառումների ցանկը զգալիորեն փոփոխվել է: 2010թ. պետական ծրագրում տեղ գտած 51, իսկ 2011թ. ծրագրում 43 միջոցառման փոխարեն 2012թ. ծրագրում ներկայացված են 23-ը:

Անդրադառնալով ծրագրի բովանդակային մասին, հարկ է նշել, որ որոշ բացառություններով հանդերձ, 2012թ. պետական ծրագիրը գրեթե կրկնում է նախորդ ծրագրի բովանդակությունը<sup>7</sup>: - Փաստաթղթի զգալի մասը նվիրվում է մոնիտորինգային (իրավիճակի նկարագրության) հաշվետվությանը, իսկ զուտ ծրագրային դրույթները ոչ էական են<sup>8</sup>: Չեն ներկայացվում իրականացվող քաղաքականությունում ճշգրտումները, նախորդող ծրագրերի իրականացման արդյունքում կատարված ճշգրտումները կամ փոփոխությունները, 2012թ. -ին բնորոշ գերակայությունները, ծրագրի նպատակների հասնելու համար անհրաժեշտ պայմանները ու նախադրյալները, և այլն: Ընդհանուր առմամբ, տեքստային մասի անփոփոխ լինելը, ինքնին, դեռ միանշանակ բացասական չէ, սակայն երբ համադրում ենք մի շարք վերջնական արդյունքների ցուցանիշների ոչ դրական դինամիկայի հետ, ապա **կարելի է մտահոգություն հայտնել, որ կառավարությունը ակտիվորեն չի ճշգրտում/թարմացնում իր ծրագրերը՝ մարտահրավերներին համապատասխան:**

## Բացահայտված խնդիրներ ու Առաջարկություններ

Թեև այս նյութը բյուջեի ու պետական ծրագրի փոխկապակցվածության աստիճանի գնահատման նպատակն է հետապնդում, այնուամենայնիվ այս գլուխը նախատեսված է վերոնշյալ խնդիրների համախմբված ներկայացման և համակարգային լուծման ուղղությամբ որոշ առաջարկությունների ներկայացման համար: Հատվածային լուծումները, որոնք կարող են բխել սույն վերլուծության արդյունքներից, այնուամենայնիվ, չեն հանդիսանում համանման դեպքերում գանազան հայեցակարգերի ու ռազմավարությունների բյուջետային համակարգ ինտեգրման լավագույն լուծումը: Հակառակը, անհրաժեշտ են լուծումներ, որպեսզի ռազմավարություններ մշակողները պարտադրված լինեն դրանք մշակելիս նախատեսեն նաև ծրագրային դրույթների սահուն ինտեգրումը ֆինանսական պլանավորման համակարգեր:

Այս վերլուծությունը հիմնականում դիտարկել է բյուջետային հատկացումների համահունչ լինելու աստիճանը ԺՔԲ դրույթների հետ: Սակայն, նման վերլուծությունը, ամեն դեպքում, մասնակի արդյունավետություն ունի, քանի որ բյուջետային հատկացումների աճը (առավելապես, կտրուկ աճը) ոչ միշտ է թղթակցում ծրագրի նպատակների հասանելությանը: Այդ իսկ պատճառով, ի լրումն զուտ բյուջետային/ֆինանսական վերլուծության, անհրաժեշտ է իրականացնել ուլտրային ավելի խորացված ուսումնասիրություն, որի նպատակը կհանդիսանա ԺՔԲ դրույթներով ամրագրված միջոցառումների ու գերակայությունների և ժողովրդագրական իրավիճակի զարգացման նպատակների պատճառահետևանքային կապը և առաջնահերթությունները: ՀՀ - Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը խոշոր քայլեր այդ ուղղությամբ արդեն իսկ կատարել է, սակայն դրանք անհրաժեշտ է համալրել ոչ միայն և ոչ այդքան գործոնների ներկայացմամբ, այլ արդեն իսկ ներկայացված գործոնների ազդեցության գործակիցների և կշիռների ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ: Այսպես, ռազմավարությունում տեղ գտած առաջնայնությունների ձևաչափը հեշտությամբ չի տրանսֆորմացվում բյուջետային ծրագրերի առաջնայնությունների: Առաջարկվում է հաշվի առնել այս հանգամանքը և միջոցառումների ցանկում ամրագրված 1 և 2-րդ դրույթների համապատասխան իրականացնել ավելի խորացված ծրագրային դրույթների մշակում:

<sup>7</sup> Ներառյալ տրամաբանական եզրակացությունները, որոնք կիրառվել էին նախորդ ծրագրում, բայց համահունչ չեն 2012թ. դրույթներին (օրինակ՝ բնական հավելվածի ու առողջության ցուցանիշների նվազման պարագայում նյութի 15-րդ կետում տեղ գտած եզրակացությունը)

<sup>8</sup> Որպես ցայտուն օրինակ կարելի է նշել այն հանգամանքը, որ ծրագրի բովանդակության 8 էջից միայն 7%-ն է նվիրվում ապագային, իսկ մնացածը՝ ներածությանը և իրավիճակի նկարագրությանը



Ամենայն հավանականությամբ, այդ բարդ վերլուծական աշխատանքների իրականացման համար բավարար չի լինի փաստաթղթային ուսումնասիրությունը, այլ հարկավոր կլինի խորացված հետազոտության իրականացումը: Հարկավոր է տարանջատել ժողովրդագրական նպատակների տեսակետից «առաջնային» և «հարակից» ծրագրերի դասակարգումը և առաջարկություններ մշակելիս առաջնորդվել այդ դասակարգումով, որպեսզի տարանջատվեն զուտ ժողովրդագրական և այլ գործոնները և ծրագրերը:

Այնուհետև, ըստ նշված առաջնահերթությունների և ծրագրերի անհրաժեշտ է իրականացնել ֆինանսական կշիռների կիրառում և ռեսուրսների առկայության վերլուծություն, որից հետո միայն հնարավոր կլինի տեղափոխել նշված դիտարկումները և առաջարկությունները բյուջետային որոշումների դաշտ: Սահմանափակ ռեսուրսների պարագայում բյուջետային հատկացումների վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն վերը նշված քայլերից հետո: Հակառակ դեպքում, բոլոր փաստաթղթերը կդիտարկվեն որպես ցանկությունների ցանկ և կինտեգրվեն բյուջետային համակարգ «մնացորդային» որոշումների սկզբունքով:

Օրինակ՝ 2012թ. պետական ծրագրի միջոցառումների ցանկի կեսից ավելի նվիրված են առողջապահության բնագավառում տեղի ունեցող նախաձեռնություններին: Դրանք, ինքնին, ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակ չեն հետապնդում այդ միջոցառումները իրականացնողների տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, ժողովրդագրական իրավիճակի ու ցուցանիշների բարելավման համար պատասխանատու մարմինները ուղղակիորեն չեն կարող ազդեցություն ունեալ այդ միջոցառումների թե՛ պլանավորման ու իրականացման և թե՛ քաղաքականության շտկման հարցերում: Նման պարագաներում անհրաժեշտ է դիտարկել այդ գործոնները որպես արտաձին (էկզոգեն) և ժողովրդագրական ծրագրում տարանջատել ուղղակի ազդեցության տակ գտնվող գործոններից, որոնք էլ պետք է հանդիսանան ծրագրի հիմնական թիրախը ու, այնուհետև, հաշվետվողականության հիմքը:

Նշվածին հակառակ, որոշ նախաձեռնություններ, որոնք ավելի ուղղակի են ներագրում ժողովրդագրական իրավիճակի վրա և, առավելապես, գտնվում են լիազոր մարմնի կառավարման դաշտում, համապատասխան տեղ չեն գտել 2012թ. պետական ծրագրի միջոցառումների ցանկում (օրինակ՝ «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ» ծրագիրը):

#### Ընդհանուր բնույթի (համակարգին առնչվող) խնդիրներ

1. Ոլորտային ռազմավարությունների (ներառյալ ԺԲՌ) կապը բյուջետային որոշումների հետ բավականին բարդացված է: Դրա պատճառներից են որոշումների կայացման ոչ միասնական մոտեցումներն ու սկզբունքները և քաղաքականությունների մշակման ոչ-ստանդարտացված մոդելները ու ձևաչափերը: Արդյունքում, հաճախակի ոլորտային ռազմավարություններն են հարմարեցվում ՄԺԾ՝ դրույթներին, այլ ոչ հակառակը: Բացի դրանից, ՄԺԾ՝ համակարգը ընձեռում է ավելի լայն հնարավորություններ ճիշտ մշակված ռազմավարությունների և ծրագրերի քննարկման և բյուջետային որոշումներում (միջ-ոլորտային և ներ-ոլորտային սահմանաչափերի որոշման ժամանակ) ինտեգրման համար, սակայն դրանք, կարծես թե, ոչ լիարժեք են օգտագործվում հենց վերևում ներկայացված խնդիրների պատճառով, այն է, ձևաչափի ու բովանդակության ոչ ամբողջական ադեկվատությունը բյուջետային քննարկումների պահանջներին:
2. Հարկ է նշել, որ եթե որևէ քաղաքականություն հռչակվում է որպես գերակայություն, ապա դրան վերաբերվող նյութերը պետք է, *a priori*, խմբավորված ու պարզ ներկայացված լինեն տարեկան բյուջետային փաստաթղթերում: Որպես նշվածի ժամանակավոր լուծում, հնարավոր է իրականացնել այլ բնագավառներում կիրառվող պրակտիկան, այն է բյուջեի ուղերձում ներառել «տարեկան ծրագրի» հավելված: Այս խնդրի ավելի երկարաժամկետ ու տրամաբանական լուծում է հանդիսանում ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում մշակված բյուջետային հատկացումների «ծրագրային դասակարգումը»: Ծրագրային բյուջետավորման հենց կորիզը նրանումն է, որ քաղաքացին կարողանա հասկանալ բյուջեի պլանավորման ու կատարման էությունը ըստ տարբեր ծրագրերի առանց որևէ լրացուցիչ

մասնագիտական ունակությունների անհրաժեշտության: Աքսիոմատիկ է, որ եթե բյուջեում ակնհայտ չեն ԺՔՌ դրույթները ապա դա նշանակում է, որ բյուջեն պատշաճ կերպ չի ներկայացնում այն: Ինչպես նշված է այս հաշվետվության սկզբնական բաժիններում, ներկա պահին այդ դասակարգման մեջ տեղ է գտել նաև «Ժողովրդագրական վիճակի բարելավման» ծրագիրը<sup>9</sup> (1068 կող), որը սակայն, բաղկացած է միայն երեք միջոցառումներից, որոնք են.

- 1) Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների ծրագրի իրականացման ապահովում
  - 2) Երեխային ծննդյան միանվագ նպաստ
  - 3) Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ
- Փաստորեն, բյուջետային համակարգը «ճանաչում» է ժողովրդագրական քաղաքականության առնչվող միայն այս սահմանափակ պատկերը: Հարկավոր է նշված ծրագրում համախմբել բոլոր այն քաղաքականության միջոցառումները, որոնք բուն ժողովրդագրական են (օրինակ՝ հնարավոր է դա նպատակահարմար համարվի միգրացիոն հոսքերի կառավարմանը վերաբերող միջոցառումների գծով): Միայն ճիշտ խմբավորված բյուջետային ծրագրի առկայության և այդ ծրագրին ամրակցված պատասխանատու մեկ մարմնի առկայության պարագայում կարելի է ունենալ պատշաճ կառավարվող բյուջետային ծրագիր՝ իր թե՛ պլանային ու կատարման և թե՛ մոնիտորինգային ու հաշվետվողական համակարգերով, որոնք գործում են բյուջետային համակարգում: Ընդհանրապես, քաղաքականության մշակման ու բյուջետային պլանավորման գործընթացների սինխրոնացումը կարելի է իրականացնել ծրագրային բյուջետավորման գործիքի ներդրման շնորհիվ:

### Առանձնացված խնդիրներ

1. Ժողովրդագրական քաղաքականության տարեկան ծրագրերը պետք նաև համահունչ դարձնել բյուջետային համակարգում կիրառվող «Գերատեսչական տարեկան ծրագրերի» հետ, որոնք ներկայացվում են Ազգային ժողով բյուջեի նախագծի հետ, ինչպես նաև հաստատվում են կառավարության կողմից՝ եռամսյակային մոնիտորինգային հաշվետվողականությունը ապահովելու նպատակով: Նշվածի կիրառումը նաև ենթադրում է ծրագրի նպատակների, վերջնական արդյունքի ու կատարողական ցուցանիշների մշակում/հստակեցում, ինչպես նաև ծրագրի անձնագրի մշակում<sup>10</sup>:
2. «Երիտասարդներին մատչելի բնակարան» ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը կարիք ունի հստակեցման՝ այն երկարաժամկետ կայուն հիմքերի վրա դնելու անհրաժեշտությունից ելնելով: Նախ, այն պետք է հստակորեն հանդիսանա ժողովրդագրական ծրագրի մաս, եթե այդ բնակարանները ձեռքբերելու համար նախատեսված միջոցները նպատակ են հետապնդում նոր ընտանիքների ձևավորման և երեխաների քանակի աճին նպաստելու նպատակ: Այնուհետև, համաձայն կառավարության որոշման<sup>11</sup> այդ ծրագրի իրականացմանը մասնակցում են միանգամից մի քանի պետական կառույցներ, ընդ որում, դրանցից ամենախոշոր դերակատարը (ՀՀ ԿԲ) ոչ պարտադիր սկզբունքով: Նշված ծրագիրը հանդիսանում է իշխանության գործադիր թևի հստակ սոցիալական (ժողովրդագրական) ոլորտային ու ֆինկալ քաղաքականության մաս կազմող նախաձեռնություն: Դրամավարկային քաղաքականության նպատակներով առաջնորդվող կառույցի ներգրավումը, այն էլ հիմնական կամավոր ու խոշոր ֆինանսական դերակատարությամբ (վարկային միջոցների հիմնական մատակարար, օրինակ՝ 2012թ. ընթացքում նախատեսված է 6 մլրդ. դրամ գումարի չափով համապատասխան կառույցում կապիտալի համալրում), հղի է ծրագրի կատարման հստակ պատասխանատվության փոշիացման վտանգով: Բացի այդ, ծրագրում առկա են նաև այնպիսի դերակատարներ, ինչպիսիք են ՀՀ ֆինանսների նախարարությունը (տոկոսների փոխհատուցում, օրինակ՝

<sup>9</sup> Տես ՀԱՎԵԼՎԱՏ Գ. ՆԵՐԿԱ ՊԱՇԻՆ ԿԻՐԱՎՈՂ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ (ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ)

<sup>10</sup> Բյուջետային ծրագրի անձնագրի ձևաչափը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱՏ Բ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՎԱՐԱԳԻՐ (ԱՆՁՆԱԳԻՐ)-ՈՒՄ

<sup>11</sup> 2010թ. հունվարի 29-ին ընդունված թիվ 98-Ն ՀՀ կառավարության որոշում

2012թ. բյուջեում նախատեսված է 212 մլն. դրամ), ՀՀ Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարություն (ծրագրի մշակմանը մասնակից մարմին) և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ժողովրդագրության քաղաքականության գծով պատասխանատու մարմին, որը սակայն համապատասխան դերակատարում չունի այս ծրագրում): Երկարաժամկետ առումով, նման իրավիճակը բարենպաստ չի ծրագրի իրականացման ու զարգացման տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ է ծրագրի ընթացքը ապահովելու համար այն տեղափոխել բյուջետային շրջանակ (վերացնելով ՀՀ ԿԲ-ին ոչ բնորոշ քաղաքականություն իրականացնելու համար առկա «առաջարկը»<sup>12</sup>): Նշված ծրագիրը արժանի է դրամավարկային քաղաքականություն իրականացնող և միջազգային նվիրատու կազմակերպություններից ամբողջովին անկախ լինելուն, քանի որ այն ունի «կյանքի» ավելի երկար ցիկլ, քան ներկա պայմաններում առաջացած հնարավորությունները:

Ամփոփ տեսքով առաջարկությունները կարելի է ներկայացնել հետևյալ շրջանակներում.

1. Միջոցառումների ցանկում ամրագրված 1 և 2-րդ դրույթների համապատասխան իրականացնել ավելի խորացված ծրագրային դրույթների մշակում.
  - a. Տարեկան ծրագրերը համահունչ դարձնել ռազմավարության դրույթների հետ: Շեղումների պարագայում անհրաժեշտ է հիմնավորել դրանց առաջացումը:
  - b. տարանջատել ժողովրդագրական նպատակների տեսակետից «առաջնային» և «հարակից» ծրագրերի դասակարգումը և առաջարկություններ մշակելիս առաջնորդվել այդ դասակարգումով:
  - c. իրականացնել ֆինանսական կշիռների կիրառում և ռեսուրսների առկայության վերլուծություն:
  - d. «Երիտասարդներին մատչելի բնակարան» ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը կարիք ունի հստակեցման՝ այն երկարաժամկետ կայուն հիմքերի վրա դնելու անհրաժեշտությունից ելնելով:
    - i. Նախ, այն պետք է հստակորեն հանդիսանա ժողովրդագրական ծրագրի մաս, եթե այդ բնակարանները ձեռքբերելու համար նախատեսված միջոցները նպատակ են հետապնդում նոր ընտանիքների ձևավորման և երեխաների քանակի աճին նպաստելու նպատակ:
    - ii. Այնուհետև, անհրաժեշտ է ծրագրի ընթացքը ապահովելու համար այն ամբողջովին տեղափոխել բյուջետային շրջանակ:
2. Որպես ժամանակավոր լուծում, հնարավոր բյուջեի ուղերձում ներառել «ժողովրդագրական տարեկան ծրագրի» հավելված: Այս խնդրի ավելի երկարաժամկետ ու տրամաբանական լուծում է հանդիսանում ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում մշակված բյուջետային հատկացումների «ծրագրային դասակարգումը»՝ ներառելով ժողովրդագրության ծրագրի բոլոր առաջնային միջոցառումները:
3. Ժողովրդագրական քաղաքականության տարեկան ծրագրերը պետք նաև համահունչ դարձնել բյուջետային համակարգում կիրառվող «Գերատեսչական տարեկան ծրագրերի» հետ:
4. Բոլոր այս քայլերը կատարելուն զուգահեռ և հաշվի առնելով ժողովրդագրական խնդիրների գերակա լինելու կարգավիճակը (եթե դա իրոք հաղնիսանում է գերակայություն), անհրաժեշտ է լրացուցիչ կշիռ տալ այս ծրագրի ուղղությամբ ֆինանսավորման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին: Մասնավորապես, բոլոր ծրագրային հիմքերը պատրաստելուն զուգահեռ հնարավոր է այս ուղղությամբ միջնաժամկետ և տարեկան բյուջեի քննարկումները իրականացվել առավել թափանցիկ ու հրապարակային՝ ներգրավվելով շահառու-

<sup>12</sup> Այս ծրագրի ներկա ձևաչափը պատահական չէ, քանի որ այստեղ գոյություն ունի նաև միջազգային նվիրատու կազմակերպության առկայության գործոն, որը համագործակցում է ՀՀ ԿԲ հետ՝ հիպոտեկային շուկան կայունացնելու ու զարգացնելու նպատակից ելնելով: Փաստորեն, ՀՀ ԿԲ-ը իրականացնելիս այս ծրագիրը առաջնորդվում է ոչ թե ժողովրդագրական, այլ ֆինանսական կայունության ապահովման նպատակներից: Կառավարության դերը, փաստորեն, կայանում է նրանում, որ այն մասնակցում է տոկոսների փոխհատուցմանը և, իր առաջարկով, նեղացրել է հիպոտեկային շուկայի հնարավոր շահառուների շրջանակը՝ համատեղելով այն ժողովրդագրական քաղաքականության դրույթների պահանջների հետ

ների ավելի լայն շրջանակ: Կայացված որոշումները ու դրանց կատարման վերաբերյալ հաշվետվողականության աստիճանը պետք է բարձրացնել և բարելավել<sup>13</sup>:

Ամփոփելով հաշվետվությունը, հարկավոր է նշել, որ 2012թ. պետական բյուջեի և 2012թ. ժողովրդագրական քաղաքականության տարեկան պետական ծրագրի փոխկապակցվածությունը ոչ լիարժեք է<sup>14</sup>: Այնուամենայնիվ, այդ փոխկապակցվածությունը ամրապնդվել է նախորդ հաշվետվության համեմատ: Դրա պատճառը կրում են բովանդակային բնույթ (բյուջեում ժողովրդագրական խնդիրներին որոշ ծրագրերի գծով որոշակի աստիճանով լրացուցիչ անդրադարձը), ինչպես նաև մեխանիստական բնույթ (պետական ծրագրի միջոցառումների ցանկում իրականացված կրճատումներ):

---

<sup>13</sup> Հաշվետվողականության բարձրացման հարցում օգտակար կարող է լինել նաև նվիրատու կազմակերպությունների փորձը

<sup>14</sup> Դիտարկման ավելի մանրամաս ներկայացումը տրված է «ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՀՀ ԺՈՂՈՎՐԿԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼՎԱԿՄԱՆ 2012թ. ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱՆՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ և 2012թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ»-ում

## Հավելվածներ

**Հավելված Ա. ՀՀ Ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012թ. պետական ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկ և 2012թ. պետական բյուջեի համապատասխանության ներկայացում**

	<i>Միջոցառում</i>	<i>Նախորդ ծրագրերի հետ համեմատություն</i>	<i>2012թ. բյուջեում համապատասխանություն</i>	<i>Մեկնաբանություններ</i>
1	Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2011 թ. Պետական ծրագրով նախատեսված միջոցառումների մոնիթորինգ	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները	Բյուջեում տեսանելի չէ	Առանձնացված տողերով բյուջետային ֆինանսավորման անհրաժեշտություն չկա: Կարող է իրականացվել է ԱՍՀՆ համապատասխան ստորաբաժանման կանոնադրական գործառնություններով:
2	Ժողովրդագրական խնդիրների վերաբերյալ Հետազոտությունների կազմակերպում և իրականացում	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները	Բյուջեում տեսանելի չէ	Առանձնացված տողերով բյուջետային ֆինանսավորում չի դիտարկվում: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նմանատիպ գործառնություն նախատեսված էր 2011 թ. պետական ծրագրով, ապա ակնկալվում էր, որ 2012թ. ծրագրում արդեն իսկ ներկայացված կլինեին այդ գործոնները, կշիռները և գերակայությունների ճշգրտված տարբերակը:
3	Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի և ժողովրդագրության ոլորտում տարվող պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և ծրագրվող միջոցառումների վերաբերյալ հանրային իրազեկում	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները	Բյուջեում տեսանելի չէ	Պետական բյուջեի բացատրագրի հավելվածում տրվում է ԱՍՀՆ հանրային իրազեկման միջոցառումների ամբողջական ցուցանիշը: Թե պլանային նյութերում և թե բյուջետային մոնիտորինգի հաշվետվություններում առանձնացված չեն ԺԶԴ հանրային իրազեկման ցուցանիշները, այլ տրամադրվում է ամբողջ ԱՍՀՆ հանրային իրազեկման միջոցառումների քանակը:
4	Ժողովրդագրական զարգացման հիմնահարցերով զբաղվող պետական ծառայողների որակավորման բարձրացում	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները	Բյուջեում տեսանելի չէ	ԱՍՀՆ ոչ ֆինանսական ցուցանիշների աղյուսակում նման միջոցառում ներկայացված չէ:
5	Ընդլայնված վերարտադրության խրախուսում	Նախորդ ծրագրի միջոցառումների ցանկում բացակայում էր	ՄԺԾՆ փաստաթղթում նշվում է այս ուղղությամբ ընդունված որոշումը և	Հարկ է նշել, որ համաձայն 2012-14թթ. Հրապարակված և մշակման փուլում գտնվող 2013-15թթ. ՄԺԾՆ փաստաթղթերի զգալի աճ է

	<i>Միջոցառում</i>	<i>Նախորդ ծրագրերի հետ համեմատություն</i>	<i>2012թ. բյուջեում համապատասխանություն</i>	<i>Մեկնաբանություններ</i>
			հատկացվելիք գումարները	Նախատեսվում 2014թ-ից:
6	«Երիտասարդներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացում	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները: Սակայն, երկու փաստաթղթում էլ միջոցառման նկարագրությունը ոչ լիարժեք է:	Պետական բյուջեով նախատեսված է այս ծրագրի գծով ծախսեր՝ համաձայն 2010թ. հունվարի 29-ի 98-Ն և հոկտեմբերի 11-ի 1470-Ն որոշումների	Միջոցառուկների ցանկում նշված է միայն «ծրագրի մոնիտորինգը»: Իրականում, պետական բյուջեում տեսանելի են նաև այդ ծրագրի շրջանակներում իրականացվող տոկոսավճարների գծով ծախսերը և ներկայացվում է շահառուների քանակը:
7	Նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում	Շահառուների թվաքանակը աճել է 33%-ով:	Համապատասխանում է	Այս ծրագրի գծով ավելացել են և գումարը և շահառուների քանակը և ընդգրկված մարզպետարանների քանակը (նախկինում 4ի փոխարեն 2012թ. բյուջեում գումար է հատկացվելու 8 մարզերին)
8	Վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող շաքարային դիաբետի, սիրտ-անոթային, չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրերի իրականացում	Բարելավման ցուցանիշի աճ (մինչդեռ հաշվետվությունները վկայում են հակառակ տենդենցի մասին)	Չի համապատասխանում	Բյուջետային վերլուծության սահմաններում դժվար է պատկերացնել նման էական դրական զարգացում բյուջեի հատկացումների աննշան փոփոխության պայմաններում: Համեմայն դեպք, բյուջետային փաստաթղթերը չեն բացահայտում նման հնարավորության հիմնավորում:
9	Մայրական առողջության բարելավում	Նպատակային ցուցանիշը ավելի է խստացվել:	Համապատասխանության որոշ նախադրյալներ կան	Բյուջեում ակնարկվում է հենց այս ուղղությամբ լրացուցիչ ֆինանսավորման ու ծառայությունների որակի բարելավման կապը
10	Մտավոր և ֆիզիկական թերզարգացման և հաշմանդամության կանխարգելման միջոցառումների շրջանակներում նորածնային սկրինինգ ծրագրերի իրականացում ՀՀ ողջ տարածքում, այդ թվում՝ - հիպոթիրեոզի - ֆենիլկետոնուրիայի - լսողության	Ցուցանիշի որոշակի բարելավում	Հստակ փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Բյուջետային փաստաթղթերում առկա չէ այս ուղղությամբ հստակ ֆինանսավորում: Հնարավոր է, որ այս տեղեկատվությունը առկա է ոչ բյուջետային պլանային փաստաթղթերում:
11	Սպառողների առողջության համար աննդամթերթի անվտանգության ապահովման	-	Բյուջեում նախատեսված միջոցների որոշակի աճը	Թեև բյուջեի հետ կապը դրական է, այնուամենայնիվ, հարկավոր է նշել, որ կառուցվածքային

	<i>Միջոցառում</i>	<i>Նախորդ ծրագրերի հետ համեմատություն</i>	<i>2012թ. բյուջեում համապատասխանություն</i>	<i>Մեկնաբանություններ</i>
	համակարգի կատարելագործում, այդ բնագավառում միջազգային լավագույն փորձի տեղայնացում		Նպատակաուղղված է կառուցվածքային բարելավումներին	բարելավումները դեռ ինքնաբերաբար չեն բերում ծառայության որակի բարելավմանը: Վերջինիս տեսանկյունից դիտարկելիս, ակհայտ է, որ 2012թ. բյուջեն չի ներկայացնում տեղեկատվություն բուն սննդի անվտանգության աճին ուղղված միջոցների աճի մասին:
12	Կանանց և տղամարդկանց անապոլության կանխարգելմանն ու բուժմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	-
13	Հղիների մոտ սեռավարակների թեսթավորում	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները	Հստակ փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Հստակ փոխկապակցվածությունը չի դիտարկվում, սակայն հնարավոր է, որ այն գոյություն ունի և կրկնում է 9-րդ տողի բովանդակությունը
14	Հղիության արհեստական ընդհատման անվտանգության մակարդակի բարձրացում	Կրկնում է նախորդող պետական ծրագրի դրույթները	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Բյուջեում չի դիտարկվում այս ուղղությամբ հստակ դիրքորոշում
15	Ընտանիքի պլանավորման ծառայությունների ցանցի հզորացում, մատչելիության բարձրացում, ծառայություն մատուցող մասնագետների գիտելիքների բարձրացում	Բովանդակությունը ճշգրտվել է	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Բյուջեում չի դիտարկվում այս ուղղությամբ հստակ դիրքորոշում
16	Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող ինֆեկցիոն հիվանդությունների՝ տուբերկուլյոզի, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների, կառավարելի վարակիչ հիվանդությունների կանխարգելում, անհրաժեշտ պատվաստումների և սկրինինգային հետազոտությունների իրականացում	Որոշ ցուցանիշների վատթարացում	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Բյուջեում այս ուղղությամբ անփոփոխ է
17	Նորածնային ախտաբանությունների ներարգանդային ախտորոշման գործընթացի բարելավում, վաղ ախտորոշում և անհրաժեշտ բժշկական	Ցուցանիշի զարգացում (թեև նախորդ ծրագրի նպատակային ցուցանիշը ամբողջովին չի կատարվել,	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Բյուջեում չի դիտարկվում այս ուղղությամբ հստակ դիրքորոշում



	<i>Միջոցառում</i>	<i>Նախորդ ծրագրերի հետ համեմատություն</i>	<i>2012թ. բյուջեում համապատասխանություն</i>	<i>Մեկնաբանություններ</i>
	գործընթացի ապահովում	այնուամենայնիվ նկատվում է դրական զարգացում)		
18	Երեխաների և դեռահասների առողջության պահպանում և զարգացում	Կրկնում է Նախորդող պետական ծրագրի դրույթները	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	ԺԶՌ տեսանկյունից, այս ուղղությամբ հստակ որոշումները կայացվել էին Նախորդող բյուջետային շրջաններում
19	Վերարտադրողական օրգանների չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերում և կանխարգելում սպասարկման տարածքում բնակվող 30-60 տարեկան կանանց օնկոցիտոլոգիական հետազոտության իրականացում	Կրկնում է Նախորդող պետական ծրագրի դրույթները	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Բյուջեում չի դիտարկվում այս ուղղությամբ հստակ դիրքորոշում
20	Ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդմանը, անհատի ներդաշնակ զարգացմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը նպատակաուղղված զանգվածային միջոցառումների, մրցույթների կազմակերպում և իրականացում	Կրկնում է Նախորդող պետական ծրագրի դրույթները	Փոխկապակցվածությունը չի դիտարկվում	Առողջապահության ոլորտի ծախսերում այս ուղղությամբ զարգացումներ 2012թ. բյուջեում չեն նկատվում
21	Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովում			
22	Հայաստանի Հանրապետության միզրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների մոնիթորինգ	Նախկինում բացակայել է	Բյուջեում տեսանելի չէ	Առանձնացված տողերով բյուջետային ֆինանսավորման անհրաժեշտություն չկա: Կարող է իրականացվել է ԱՍՀՆ համապատասխան ստորաբաժանման կանոնադրական գործառույթներով:
23	«Թանգարան անիվների վրա» և «Շարժական գրադարան» ծրագրերի իրականացում	Կրկնում է Նախորդող պետական ծրագրի դրույթները	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Այս ուղղությամբ ծախսերը մաս են կազմում ավելի խոշոր ծրագրերի: Դրանց տարանջատումը փաստաթղթային ուսումնասիրությամբ հնարավոր չէ իրականացնել: Այնուամենայնիվ, բյուջետային փաստաթղթերում դիտարկվում է ոչ ֆինանսական

	<i>Միջոցառում</i>	<i>Նախորդ ծրագրերի հետ համեմատություն</i>	<i>2012թ. բյուջեում համապատասխանություն</i>	<i>Մեկնաբանություններ</i>
				ցուցանիշների կայուն մակարդակ՝ նախորդ տարվա համեմատ:

Նշումներ. Այս հավելվածում տեղ գտած դիտարկումները ու մեկնաբանությունները կրում են ընդհանրական բնույթ և կիրառելի են միայն սույն հաշվետվության ենթատեքստում՝ ԺԶԴ և 2012թ. բյուջեի նախագծի հատկացումների դինամիկ պատկերի համապատասխանելիության մոտարկված գնահատականի տեսանկյունից:

	Կարմիր գույնով ներկայացվում են նշված փաստաթղթերի դրույթների անհամապատասխանության դեպքերը
	Դեղին գույնով ներկայացվում են նշված փաստաթղթերի դրույթների համապատասխանության վերաբերյալ գնահատականի անհնարության կամ ոչ կիրառելի լինելու դեպքերը
	Կանաչ գույնով ներկայացվում են նշված փաստաթղթերի դրույթների համապատասխանության դեպքերը

**Հավելված Բ. Բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր)**

1. ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1.1. ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ \_\_\_\_\_

1.2. ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ \_\_\_\_\_

1.3. Ծրագրի գործունեության սկիզբը \_\_\_\_\_թ.

1.4. ԾՐԱԳՐԻ ՆԱԽՈՐԴ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ (ըստ ՀՀ պետական բյուջեի մասին համապատասխան տարեթվերի օրենքների). /Եթե կիրառելի է/

1. \_\_\_\_\_/.....թ./

2. \_\_\_\_\_/.....թ./

3. \_\_\_\_\_/.....թ./

1.5. ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՎԱՐՏԸ \_\_\_\_\_ թ./Եթե կիրառելի է/

1.6. Ոլորտային քաղաքականության պատասխանատու մարմին

- \_\_\_\_\_

1.7. Ծրագրի կատարող/ների դասիչը (Գերատուչական ԲԳԿ դասիչ)

- \_\_\_\_\_

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ \_\_\_\_\_

---



---

2.2. Ծրագրի իրավական հիմքերը

• Իրավական հիմք	• Նկարագրություն
•	•

2.3. Պետական մարմնի լիազորությունները սույն ծրագրի իրականացման հարցում

2.4. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ և ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	Շահառուների նկարագրություն	Ծառայությունների նկարագրություն	Փախհատուցման շրջանակ
1			
2			

2.5. ԾՐԱԳՐԻ ԽՆՆԻՐՆԵՐԸ և դրանց կապը ծրագրի նպատակի հետ

Նպատակ	Խնդիր	Խնդրի (դրա լուծման) ազդեցությունը նպատակի վրա

2.6. ԾՐԱԳՐԻ Կառուցվածքը (Քաղաքականության միջոցառումները)

ՔՄ դասիչ	Քաղաքականության միջոցառում	ՔՄ նկարագրություն

2.7. Ծրագրի իրականացման եղանակը (միջոցները և իրականացնող կազմակերպությունների շրջանակը)

**ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ցուցանիշները**

2.8. Վերջնական արդյունք

Արդյունքի ցուցանիշ	Չափման միավորը	Ստուգման եղանակ/աղբյուր	Պարբերականություն

2.9. Ուղղակի արդյունքներ

Քաղաքականության միջոցառում	Արդյունքի ցուցանիշ	Չափման միավորը	Ստուգման եղանակ/աղբյուր	Պարբերականություն

**Հավելված Գ. Ներկա պահին կիրառվող ժողովրդագրության բյուջետային ծրագիրը (ծրագրային դասակարգում)**

Ծրագրի կոդ	Ծրագրի անվանում	ՔՄ կոդ	ՔՄ անվանում	ԲԳԿ անվանումը
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագիր	ԱՃ01	Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների ծրագրի իրականացման ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
		ՃՏ01	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
		ՃՏ02	Երեխային ծննդյան միանվագ նպաստ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

